№ 222 ԵՐԵՔՇԱԲԹԻ 8 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 8 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 222

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

### ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱԾ ՎԵՐՋԸ 3 ՐՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակաղրոշմ, ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. ջուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ՝ —20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Նովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Վիլնայում՝ Большая 38, Գարիզում՝ Площадь Биржи 8

1913 թ. տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

**ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ**

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ
Գ. Տեր-Ղեւոնդեանի
(Միքայէլեան կամուրջ)
ՄՕՏ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
«Մշակ» լրագրի 40-ամեայ յօբելեանի առիթով «Մշակի» աշխատակիցների 99 հոգուց խմբանկարը 40×50 սանտիմ. մեծութեամբ, արժողութեամբ 3 ր.։
Նոյնպէս
Ս. ՍԱՀԱԿԻ և Ս. ՄԵՍՐՈՊԻ
պատկերները զանազան մեծութեամբ, 20 կոպէկից մինչև 3 ր.։
Նմանապէս
բազմաթիւ հասարակական և գրական գործիչների պատկերներ մատչելի գներով։
առ. 855. 2—1

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Վերադառնալով արտասահմանից վերանորոգից ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, թոքախտի և սրտի. բժշկութիւնն նաև խառն տուրիկուլիներով, արհեստական պնեվմոտորակով։ Թոքերի և սրտի քննութիւնը, լաբորատորված բնագիտական շանթային ճառագայթներով։ Ամեն օր՝ 9—12 ժամ և 5—7 ժ. երեկոյեան. Бебутовская 23, тел. 7—92.
(ա.օ.) առ. 92 100—85

### ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
5 և 6 հոկտեմբերի

Պետերբուրգ.—Հոկտ. 5-ին, Գահաժառանգի անուանակոչութեան օրը մայրաքաղաքը զարդարված էր դրօշակներով։ Բոլոր եկեղեցիներում, կառավարական հաստատութիւններում, կրթական հիմնարկութիւններում և զօրամասերում կատարվեցին մաղթանքներ։

—

Պետերբուրգ.—Հոկտ. 5-ին Գահաժառանգի անուանակոչութեան օրը Հեռ. Գործակալութիւնը պետութեան զանազան քաղաքներից տեղեկութիւններ ստացաւ, ինչպէս և արտասահմանից—տեղի ունեցած մաղթանքների մասին։

—

Մոսկվա.—Գրական-Գեղարուեստական ընկերութեան մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր նիստ «Русскія Вѣдомости»-ի 50-ամեայ յօբելեանի առիթով։ Մատուցվեցին ուղերձներ, արտասանվեցին ողջոյնի ճառեր ընթերցողների, գրական, կրթական կազմակերպութիւնների, Պետ. Դումայի ձախակողմեան ֆրակցիաների և Պետ. Խորհրդի խմբակի կողմից։ Արտասանվեցին մի շարք ողջոյններ, որոնք բնորոշեցին «Рус. Вѣд.»-ի վերաբերմունքը դէպի կեմալոն, գիտութիւնը, քաղաքականութիւնը և գրականութիւնը։ Հանգանակված է 30,000 ռուբլի «Рус. Вѣд.»-ի անունով գրականագէտներին և ժուռնալիստներին նպաստելու և գրաշարների զաւակներին թոշակ տալու համար։ Դումայի առաջադէմ ֆրակցիայի ուղերձի ընթերցման ժամանակ նիստը փակվեց, աստիկանութեան ներկայացուցչի ձեռքով, որ Դումայի անդամ Եֆրեմովի ճառի մէջ նկատեց շեղումն նիստի ծրագրից։ Երեկոյեան «Սլ. բազարում» կայացաւ բանկէտ. ներկայ էին 500 հոգի։

—

Հայպցիգ.—Երէկ երեկոյեան եկաւ արքիդուքս Ֆրանց-Ֆերդինանդը, որին կայարանում դիմաւորեցին Սակսոնիայի թագաւորը և պրինցը։

Առ. ժամը 10-ին գլխաւոր կայարանը ժամանեց Վիլհելմ կայսրը և դիմաւորվեց սակսոնական թագաւորից։ Կայսրը և թագաւորը դիմեցին դէպի «Ժողովուրդների կռիւ» արձանը, ուր այդ ժամանակ եկաւ Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրովիչը շքախմբով և ժողովել էին Լայպցիգում գտնվող բոլոր օգոստափառ անձինք, գերմանական թագաւորները, պրինցները, օտարազգի միապետների ներկայացուցիչները, ազատ քաղաքների նախագահները և բազմաթիւ պատուաւոր քաղաքացիներ։

Ժամը 11-ին մի քանի տասնեակ հազար բազմութեան ներկայութեամբ սկսվեց արձանի օծումը։ Կառուցման նախաձեռնող գերմանական հայրենասիրական միութեան նախագահ Տիմէն ճառ արտասանեց, որով շեշտեց այն ոգեւորութիւնը, որ պատել էր Գերմանիային Նապոլէոնի դէմ պատերազմելու ժամանակ, և գերմանական ազգային գիտակցութեան զարգացումը ազատարար պատերազմի ազդեցութեան տակ։ «Ժողովուրդների կռիւ» արձանը պէտք է այսուհետև ծառայէ սիմվոլ գերմանական միութեան ու գերմանական ոյժի։ Սակսոնիայի թագաւորը յայտնեց, որ արձանը առնում է իր պաշտպանութեան տակ։

Արձանը Գերմանիայի բոլոր արձաններից ամենախոշորն է հանդիսանում, արժեց 6 միլիոն մարկ և կառուցված է այն տեղում, որտեղից Նապոլէոնը 1813 թ. դիտում էր կռիւի ընթացքը։

—

Լայպցիգ.—Հոկտ. 5-ին կէսօրին կայացաւ պաշտօնական նախաճաշ, որ քաղաքը տուեց ի պատիւ բարձրագոյն անձերի։ Գլխաւոր սեղանին բոլորել էին Վիլհելմ կայսրը և սակսոնական թագաւորը, որա ձախ կողմում նստել էր Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրովիչը, աջ կողմում արքիդուքս Ֆրանց-Ֆերդինանդը։

Սակսոնիայի թագաւորը հեռագրեց Թագաւոր Կայսրին. «Այսօրվայ հանդէսների ժամանակ առ Ձեր Մեծութիւնը տածած անկեղծ բարեկամական զգացմունքից յուշեցի Ձեզ, առանձնապէս ռուսաց տաճարում պատարագին ներկայ գտնվելու բաղդին. անկեղծ շնորհակալ եմ Մեծ Իշխանին ուղարկելու համար։ Թող Տէրը Ձեզ բաղդաւորութիւն պարգևէ»։

Սակսոնիայի թագաւորի տուած ճաշից յետոյ, որի ժամանակ թագաւորը արտագին շնորհակալութիւն յայտնեց բարձրագոյն անձերին գալուն համար, Մեծ Իշխանը ներկայացրեց տաճարը կառուցանող յանձնաժողովի անդամներին Վիլհելմ կայսրին, որ ողորմածաբար զրուցեց իւրաքանչիւրի հետ և իր գովքը յայտնեց երգեցիկ խմբի երգեցողութեան։

Մեծ Իշխանը մեկնեց Մինխէն։

—

Բերլին.—Լրագիրները առաջնորդող յօդուածներում Լայպցիգը հանդէսների մասին խօսում են միայն գերմանական ազգային զարգացման համար նշանակութիւն ունենալու տեսակէտից։

—

Վիէննա.—Լայպցիգի կռիւի տարեդարձը տօնվեց ամբողջ միապետութեան մէջ։ Հանդէսները կրում էին զինուորական բնաւորութիւն։

—

Լիւբեանա.—Լայպցիգի հանդէսների առիթով կայացան սլովինական ցոյցեր։ Ցուցարարները երթին դիմաւորեցին նուագախմբով և «Կեցցէ Նապոլէոնը և Իլլիրիան» բացագանչութեամբ և «Ապրի՛ր, սլաւոն» երգով։ Կատարվեցին մի քանի ձերբակալութիւններ։

—

Պարիզ.—Արմատական կուսակցութեան գործադիր կոմիտէի նախագահ ընտրվեց Կայօն։

—

Պարիզ.—Արմատական կուսակցութեան կոնգրէսը Պոում մի բանաձև ընդունեց, որ արգելում է արմատական և արմատական-սոցիալիստական կուսակցութեան անդամներին յարել ուրիշ քաղաքական խմբակների, և պաշտպանել այն մինիստրութեան, որ կը յենվի պարլամենտի բացառապէս ձախակողմեան տարրերի վրա։

—

Համբուրգ.—Ռեյխստագի լրացուցիչ ընտրութիւններին Բեբէլի տեղ ձայների ճնշող մեծամասնութեամբ ընտրվեց սոցիալ-դեմոկրատ Ստոլտէնը։

—

Նիւ-Յորկ.—Տեղս եկած անգլիական սուֆրաժիստուհիների պարագլուխ Պանկհերստին իշխանութիւնները կալանաւորեցին և թոյլ չեն տալու մտնել Միացեալ Պետութիւնները։ Պանկհերստը մտադիր է բողոքել Վաշինգտոն։

—

Մանչեստր.—Լիբերալների միտինգին Չերչիլը ճառեց նաւակառուցման մասին, շեշտելով անգլո-գերմանական յարաբերութիւնների բարելաւումը։

—

Տոկիո.—Տեղի ունեցաւ Կացուրայի թաղումը, որ Իտոյի մահից յետոյ ամենաժողովրդական եապոնացի գործիչն էր։ Անհամար ամբոխը ուղեկցում էր դագաղին։ Գերմանական կայսրի կողմից դրված էր արծաթեայ պսակ. Ճապոնացի դեսպանները դրել էին պսակներ կենդանի ծաղիկներից։

Տօեամում գնացքների ընդհարումից սպանվել են 20, վիրաւորվել են 86 մարդ։

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

### ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Անգլիական «Վէստմինստեր-Գազէտ» օրաթերթը հաղորդում է հայկական աղբիւրից, որ ռուս-գերմանական բանակցութիւնների հետևանքն այն ստացվեց, որ վճռված է հայկական բարենորոգումներ մտցնելու վրա անհրաժեշտ հսկողութիւնը յանձնել գեներալ-տեսուչների, որոնք ունենալու են թիւրք օգնականներ։

—

«Н. В.»-ի Թղթակիցը հեռագրում է Կ. Պոլսից.

«Կիրակի օրը մինիստրների խորհուրդը քննեց մասնաւոր ճանապարհով ստացված տեղեկութիւնները այն բարենորոգումների մասին, որ մեծ պետութիւնները պահանջում են Հայաստանի համար։ Նկատի առնելով որ յիշեալ նախագիծը խոստանում է Հայաստանից ստեղծել Թիւրքիայի համար նոր Մակեդոնիա, մինիստրների խորհուրդը որոշեց բոլոր ոյժերով դիմադրել նրա իրականացման և չը սպասելով մեծ պետութիւնների քայլին՝ անմիջապէս սեփական նախաձեռնութեամբ ձեռնարկել բարենորոգումների գործադրութեանը՝ վիլայէթներին վերաբերեալ նոր օրէնքի համաձայն»։

—

Կ. Պոլսից հեռագրում են, որ Զաւիդ-բէյը յայտնեց, թէ Հայաստանում բարենորոգումներ մտցնելու համար Բ. Դուռը հրաւիրել է արտասահմանեան հրահանգիչներ, սակայն երբէք չի համաձայի եւրոպական վերահսկողութեան։ Մինիստրը մատնանշում է, որ Մակեդոնիայում բարենորոգումներ գործադրելու վրա սահմանված վերահսկումը տուեց բացասական հետևանքներ։

—

Այս օրերս կը ստորագրվի պայմանագիր 1900 թ. Ռուսաստանի և Թիւրքիայի միջև կնքված դաշնագիրը վերաքննելու մասին, որ վերաբերում է Հայաստանում երկաթուղիներ կառուցանելու կօնցեսսիաներին։ Վերջնականապէս ընդունվում է, որ Հայաստանում երկաթուղիներ կառուցանելու է Ռուսաստանը ֆրանսիական դրամատէրերի աջակցութեամբ։ Շատ ցանկալի է, որ հայ դրամատէրերը ևս մասնակցած լինեն այդ՝ հայերի համար միանգամայն շահաւէտ ձեռնարկութիւններին։

—

Կ. Պոլսից հեռագրում են, որ հայկական յեղափոխական «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը պահանջեց երիտասարդ-թիւրքերից պարլամենտի ընտրութիւնները կատարել համեմատական ձայնատուութեամբ։ Իսկ եթէ այդ չը լինի, «Դաշնակցութիւնը» ձեռնպահ կը մնայ ընտրութիւններին։

—

Կ. Պոլսոյ դեսպանական առաջին թարգմաններու յանձնաժողովին կողմէ պատրաստուած տեղեկագիրը Եւրոպայի մէջ քննուելէ ետք՝ վերադարձուած է Կ. Պոլիս, անոր մէջ դեսպաններու կողմէ նոր փոփոխութիւններ մտցնելու և Բ. Դրան մատուցանելու համար։ Կ. Պոլսոյ դեսպանները առանձին խորհրդակցութիւններու միջոցին որոշեցին սպասել անգլիական նորընտիր դեսպան Պ. Մալլէթի Կ. Պոլիս ժամանումին, որմէ ետք պիտի քննեն բարենորոգմանց ծրագիրը և իրենց որոշումները պիտի ներկայացնեն Բ. Դրան, որպէսզի առանց ժամանակ կորսնցնելու գործադրութեան սկսի։

(«Աղատամարտ»)

### ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

—

Էրզրում, 30 սեպտեմբերի

Հայկական նահանգներում—Կարս, Էրզրում-Երզնկա-Վան-Բիթլիս — երկաթուղիներ անցկացնելու կօնցեսսիան Ռուսաստանի կողմից վերցված լինելու լուրը ժողովրդական բոլոր խաւերի մէջ առաջ է բերել ուրախ տրամադրութիւն։ Խմբելու մօտիկ յոյսերը նորից են զարթնում։

Շատեր ոգևորվում են, առևտրական, արդիւնաբերական ապագայ ծրագիրներ մտորում, ոմանք նախատեսում են տեղական ժողովրդի սնտեսական բարելաւումը, ուրիշներ քաղաքական փոփոխութիւնների սկզբնաւորութիւնը դուշակում և այլն։ Այդ բոլորն էլ և՛ իրաւացի են և՛ սպասելի։

Կովկասի և Թիւրքահայաստանի միջև հաղորդակցութիւնների հեշտութեան շնորհիւ առաջ եկած գլխաւոր և գնահատելի բարիքներից մէկը, անշուշտ, պիտի լինի այն միութենական երևոյթը, որ առաջ պիտի գայ հայ ժողովրդի երկու խոշոր հատուածների սերտ մերձեցումով։ Մերձեցում, որը պիտի չքացնի բարբառների տարբերութիւնը, ստեղծի այնպիսի կուլտուրական-սնտեսական և քաղաքական կապեր տանի այս ու այն կողմերի միջև, որոնց ատիճանական ու բնական զարգացումը պակվի մի ցանկալի օրքաղաքական իրաղաղ մի ակտով, կցելով Թիւրքահայաստանի նահանգները Մեծ-Ռուսաստանին։

Դա կը լինի Թիւրքահայաստանի անուծելի հարցի լուծումը։ Ռուսական երկաթուղին պիտի լինի այն ուժեղ կապը, որով պիտի կապվի Թիւրքիայի հայկական նահանգների քաղաքական, սնտեսական ճակատագիրը Կովկասի միջոցով Ռուսաստանին։ Եւ որքան շուտ՝ այնքան լաւ։

Տեղական հայ ազգաբնակութեան, մանաւանդ գիւղացիութեան, արհեստաւորների, արդիւնաբերական ձեռնարկութիւններ հիմնելու համար միտ փողատէրերի, առևտրականների միահամուռ անխարդախ ցանկութիւնն է այս։

## ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

### ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
5 և 6 հոկտեմբերի

Աթէնք.—Երէկվայ խորհրդակցութեան մէջ համաձայնութիւն չը կայացաւ հետեւեալ կէտերի նկատմամբ. Թիւրքերը պահանջում են ճանաչել սուլթանի և կայսերական տան անդամների մասնաւոր տիրապետութիւնների անձեռնմխելիութիւնը, Յունաստանը ասում է, որ անհրաժեշտ է աւելի ճշգրտօրէն որոշել ստացուածքները. Թիւրքիան կամենում է Յունաստանի վրա դնել զինուորական գերիների պահպանութիւնը. Յունաստանը պնդում է, որպէսզի այդ տարաձայնութիւնը լուծէ միջազգային ֆինանսական մասնաժողովը։ Պարիզում. բռնված յունական շոգենաւերի համար վարձատրելու խնդրի նկատմամբ Յունաստանը պահանջում է այդ վարձատրութիւնը Թիւրքիայից։ Սալոնիկի անձնատուր լինելու արձանագրութեան առիթով ծագած տարաձայնութիւնը որոշված է յանձնել Հաագայի միջնորդ դատարանին. վակուֆներին վերաբերող լուրջ յօդուածը յետաձգված է առանց նախնական քննութեան։

—

Աթէնք.—Հաշտութեան պատգամաւորները յանձնեցին Ստերգիադէսին և Սէնա-Էդդինին քննել վակուֆների հարցը։

—

Հռոմ.—Ստեֆանիի գործակալութիւնը հաղորդում է, որ Իտալիան շարունակում է Բէլգրադում բարեկամօրէն խորհուրդներ տալ, որպէսզի Սերբիան չընդդիմանայ Եւրոպայի կամքին՝ վերաբերեալ Ալբանիայի սահմաններին։ Իտալիան պահանջում է մեծ պետութիւններից, որ նման ցուցումներ նրանք ևս տան Սերբիային։

—

Վիէննա.—Տեղիս և Բուդապէշի կիսապաշտօնական օրգանները շարունակում են յարձակողական յօդուածներ տալել Սերբիայի հասցէին։ Հաղորդում են, որ եթէ Աւստրիայի նոր կորուկ դիւանագիտական քայլը ևս չօգնէ, այն դէպքում կը գործադրվեն ակտիվ միջոցներ։

«Կօր. Բիւրօյին» հաղորդում են Բէլգրադից, որ աւստրօ-ունգարական հաւատարմատարը յանձնեց արտաքին գործերի մինիստրութեանը բերանացի նոտա՝ պահանջելով յետ քաշել սերբ զօրքերին 8 օրվայ ընթացքում աւտոնոմ Ալբանիայի սահմաններից։

—

Ցետինէ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ բանակցութիւններ են սկսվել Սերբիայի և Չերնոգորիայի միջև՝ սահմանները կարգաւորելու մասին։

—

Սոֆիա.—«Պոլիտիկան» հրատարակել է գեներալ Իվանովի բացատրութիւնները զօրքի անպողոտութիւնների մասին յոյների դէմ կուռելու ժամանակ։ Բոլգարները ունէին 15,000 կանոնաւոր և 20,000 նորակոչ զինուոր. այդ ոյժով դիմադրել 120,000 յոյների դէմ անհնարին էր։ Իվանովը մեղադրում է գեներալ Սավովին՝ իրան այդպիսի դժուարին կացութեան մէջ դնելուն համար։

Մեկնեցին բոլգար կոմիսարներ Թիւրք-բոլգարական սահմանը որոշելու համար։

—

Սալոնիկ.—Կոնստանդին թագաւորը աւտոմոբիլով մեկնեց Կավալա, ուր ընդունվեց խանդավառութեամբ։

Սոֆիա.—Լրագիրները և քաղաքական շրջանները ողջունում են Ֆէտոֆի-բէյին Սոֆիայում դեսպան նշանակելը։

—

Բուխարէստ.—Կնքվեց 250 միլիոն ֆրանկի փոխառութիւն։

—

Բէլգրադ.—Պարիզում կնքված 250 միլիոն ֆրանկի 5%-ային փոխառութիւնը (50 տարի ժամանակով) նշանակված է կէսը պատերազմական ծախքերը ծածկելու, կէսը երկաթուղիներ կառուցանելու և նուաճված երկիրներում գիւղատնտեսութիւնը զարգացնելու համար։

Հոկտ. 4-ին Պեսոր թագաւորը, բանալով սկուպշչինայի հերթական նստաշրջանը, կարդաց գահական ճառը, որի մէջ մատնանշեց պատերազմի հետևանքների վրա, մանրամասն կանգ առաւ ձեռնարկված կուլտուրական գործունէութեան վրա։ Թագաւորը վերջում յոյս յայտնեց, որ մօտիկ ապագայում կարողվի բարի յարաբերութիւններ վերականգնել Թիւրքիայի և Բոլգարիայի հետ։

## ԱՂԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Դժբաղդաբար հեռագրական հակիրճ լուրերից Ջոկ, դեռ չեն ստացվել մանրամասնութիւններ կօնցեսսիայի պայմանների մասին։

Թիւրք օֆիցէրների շրջանում խօսվում է, որ Ռուսաստանը նպատակ ունի ստանալ միայն երկաթուղիների կօնցեսսիան Թիւրքահայաստանում և այդքանով էլ բաւականանալ. իբր թէ նա իրաւունքը նախօրօք վերցնելով նպատակ ունի թոյլ չը տալ ուրիշներին շինելու, իսկ ինքը ևս չի շինելու արդէն, որովհետև ռազմական տեսակէտից ձեռնտու չի կարող լինել նրան, իր հարևան երկրում հաղորդակցութեան որևէ հեշտ միջոց։

Ապագան ցոյց կը տայ, թէ ո՞րքան իրաւացի է այս ենթադրութիւնը։ Առ այժմ, արտաքին մի քանի նշաններ գալիս են փաստելու, որ, գոնէ այս անգամ, երկաթուղիների հարցը կը ստանայ շտապողական և իրական գործադրութիւն։ Որովհետև Ռուսաստանը ստիպված է շուտով ձեռնարկել երկաթուղիների շինութեան, եթէ ցանկանում է Թիւրքահայաստանում ծայր առող գերմանական յաւակնութիւններն ու պրօպագանդան կասեցնել հէնց իր սկզբնական շրջանում։ Այլ կերպ լինել չի կարող, քանի որ ռուսական քաղաքականութիւնը չի ուզում և կամ ընդունակ չէ խաղաղ կուլտուրական և անտեսական թափանցումներ անել Թիւրքահայաստանում։ Միակ միջոցը մնում է երկաթուղին։

Կարս—Էրզրում—Վան—Երզնկա—Բիթլիս երկաթուղային գիծը հիմնովին պիտի փոփոխի Թիւրքահայաստանի առևտրական հրապարակը, ներմուծված ապրանքների տեսակները, ապրանքների գները, առևտրի ձևը, ընտանեկան և հասարակական բարքերն ու սովորութիւնները։ Ռուսական արդիւնաբերութիւնը այսպիսով պիտի գտնի մի շատ լաւ սպառող և շահաւէտ շուկայ։ Ռուսական ապրանքը հրապարակից դուրս քշելով եւրօպական շատ տեսակի ապրանքներ՝ ինքը պիտի գրաւի նրանց տեղը և պիտի դառնայ տիրապետող։

Թիւրքահայաստանի նահանգների համար եւրօպական ապրանքները ներմուծվում են Տրապիզօնի ճամբով. մինչև Էրզրում, գրեթէ 270 վերստ ճանապարհը, վագօնն ու սայլը անցնում են 10—17 օրից։ Պակասանի համար տրանսիտ ապրանքները ևս այժմ բաւական խոշոր չափով, ուղտերի կարաւանով, անցնում են Տրապիզօն-Էրզրում ճանապարհով։ Զմեռը երթևեկութիւնը շատ անգամ բոլորովին խափանվում է։

Բաթում—Կարս—Էրզրում երկաթուղային գիծը, շնորհիւ իր արագ փոխադրելու առաւելութեան, պիտի գրաւի ոչ միայն պարսկական տրանսիտը (Ատրպատականի հարաւային մասի և առհասարակ ներքին շրջանների), ինչպէս արեց Երևան-Ջուլֆա գիծը Հիւսիսային Պարսկաստանի տրանսիտի նկատմամբ (սկզբում բոլորի էլ ճամբան Տրապիզօն-Էրզրում գիծն էր), այլ և Թիւրքահայաստանի բոլոր փոխադրութիւնները։ Սև-ծովը Կովկասի միջոցով պիտի կապվի հայկական նահանգների հետ, մինչև Տրապիզօնի երկաթուղու շինութիւնը։ Հաւանականաբար հայկական նահանգների գիծը երկարի մինչև Տրապիզօն, փոխանակ Տրապիզօնի գիծը երկարելու դէպի Թիւրքահայաստան։

Տրապիզօն—Էրզրում գծով ապրանքները այժմ փոխադրվում են պուդը 1 ր. 20 կ.—2 ռուբլի. Բաթում—Կարս—Էրզրում գծի երկաթուղային տարիֆը այդ ծախսը եռապատիկ ու քառապատիկը կը դեղչի ու կը կատարի փոխադրութիւնը $1\frac{1}{2}$—3 օրից։

Նոր դարագլուխ է բացվում Թիւրքահայաստանի ժողովուրդների համար։

Զանդխութիւնը, որ արմատացած չարիք է այս երկրում և որդի նման կրծում, չորացնում է ժողովրդի թարմ ոյժերը, շնորհիւ երկաթուղիների բերած անմիջական և անուղղակի բարիքների այլ ևս վերջ կը գտնի, դաղար կառնի։ Այն, ինչ տասնեակ տարիներով չեն կարողացել անել յորդորները, պատրիարքական շրջաբերականները ու մեր բարեմիտ ինտելիգենցիան պանդխութեան և գաղթի հոսանքի դէմ, երկաթուղին կանի շատ աջող կերպով և դրական ձևով։ Որովհետև մասսաների համար կը բացվեն աշխատանքի նոր և լայն շրջաններ։

Ժողովուրդների կեանքը ձևողը ուտոպիական ֆրազները, զարդարուն խրատները չեն, այլ Նրա ապրած անտեսական ֆակտորի այս կամ այն փուլը։

Դարերի ընթացքում բռնակալների միջև խնձորի նման ձեռքից ձեռք ելված այս երկիրը, շնորհիւ ռուսական երկաթուղիների, կարճ ժամանակում կենթարկվի այնպիսի խոր ու արմատական փոփոխութիւնների, կը թեակոխի այնպիսի բարգաւաճման շրջան, որպիսին նա երբեք չը պիտի կարողանայ տեսնել ոչ ներկայ «սահմանադրական» խեղկատակ ռէժիմով և ոչ էլ à la թիւրք «ազատութեան», «արդարութեան» շարլատան ֆեերմաններով։

Առօրեայ այս բազմաթիւ սպանութիւնները, թալանները, վերջապէս հայ ժողովրդի մարտիրոսագրութեան պրօցեսը վերջ չեն կարող գտնել ոչ մի «հրաշագործ» բեֆօրմով, թէկուզ լինի նա փոխանակ Թիւրքականի՝ եւրօպական մարկայով։

Ռուսական երկաթուղին Թիւրքահայաստանի լեռներում իր ուժեղ ոլացքով ու սուլոցով պիտի ասի վճռական, վերջնական խօսքը։

Այսպէս է Թիւրքահայերի տրամադրութիւնն ու երազը այժմ։

Երանի՜ թէ չը յուսախաբվէինք Կիւրմ

# ԻՐՇԶԻՆԱԿԻՒ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

—o—

## ԲԷՅԼԻՍԻ ԳՈՐԾԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Կիէվ, 5 հոկտեմբերի

Պաշտպանող կողմի վկայ Վիշէմիրսկին, որ մինչև 1911 թուի մայիսը տուն ունէր Լուկեանովկայում, ասում է, որ սպանութիւնից 2—3 ամիս յետոյ վկայի մօտ եկաւ նախկին գործակից Բավիչը և պատմեց, որ նրա կինը, մանելով Զեբէրեակի բնակարանը, նկատեց լողարանում գորգի մէջ փաթթված դիակ։ Բավիչը նոյնպէս ասում էր, որ Զեբէրեակն իրան տուեց մի արկղ ատրճանակներով և ծառայութեան համար նուիրեց մի ատրճանակ. կնոջ հետ Ամերիկա մեկնելուց առաջ Բավիչը ասում էր, որ մեկնելու համար փող է տուել և տոմսակ գնել Վերա Զեբէրեակը։

Դատախազի հարցին թէ ինչու նա, իմանալով այդպիսի կարևոր հանգամանք, չը յայտնեց քննիչին, վկան ասում է, որ դա իր գործը չէ. այդ՝ ամենքին յայտնի էր. նա հասարակ առած մարդ է, քիչ էր հետաքրքրվում, առաջին անգամն է այդ մասին պատմում դատարանին։

Պարզվում է, որ վկան մինչև իր տունը վաճառելը հինգ տարի շարունակ ապրուս էր տեղափոխում գործարանից սեփական ձիերով, օրը մի քանի անգամ տեսնում էր Բէյլիսին, ստանում էր նրանից ընկալագրեր։ Վկան Բավիչին լաւ մարդ է համարում։ Գիտէը, որ Բէյլիսը կով ունէր, բայց սա ընկաւ սարից. բայց թէ այդ երբ էր՝ չէ յիշում։ Դատախազը կրկնում է՝ «ընկաւ ասացեք»։ Գրուզէնբերգը խնդրում է մտցնել արձանագրութեան մէջ, որ դատախազը ծաղրով կրկնեց վկայի խօսքերը, որ թոյլատրելի չէ։ Նախագահը նկատողութիւն է անում Գրուզէնբերգին, խնդրում է դատախազին գործ չածել այնպիսի դարձուածքներ, որոնք արտունչ են առաջացնում պաշտպանող կողմից։

Նախագահի հարցին, թէ ինչու Բավիչը Ամերիկա մեկնեց, վկան կարծում է, որ նա վախում էր պատասխանատուութիւնից Իւշչինսկիի գործի առիթով դատվելուց և ատբրճանակներ պահելուն համար։

Դատախազը խնդրում է արձանագրել վկայի բոլոր ասածները։ Գրիգօրօվիչ-Բարսկիի միջնորդութեամբ, դատարանը վկայում է, որ Վիշէմիրսկին դատարան է կանչվել դէպի Բէյլիսը իր վերաբերմունքը արտայայտելու համար։ Շմակօվը պաշտպաններին դիմելով ասում է. «Դուք չը գիտէք, թէ նա ի՞նչ էր ասելու»։ Գրիգօրօվիչ-Բարսկին խնդրում է արձանագրել, որ Շմակօվը ասաց. «Դուք գիտէք, թէ նա ինչ է ասելու»։ Շմակօվը առարկում է, թէ ասաց՝ «չը գիտէք». (աղմուկ)։ Նախագահը բոլորին կարգի է հրաւիրում և յայտնում է, որ տպագրված կը լինի ձեռք առնել աւելի կարուկ միջոցներ, որովհետև այսօրինակ վարմունքը դատարանում անթոյլատրելի է. «Դուք,—ասում է նախագահը,—պէտք է գիտակցէք, որ ինքներդ հանդիսանում եք մի մեղադրեալի պաշտպաններ, որին առաջադրված է լուրջ մեղադրանք, իսկ դուք ձեզ այնպէս եք պահում, կարծէք գործը ծաղրի ընտրութեան է»։ Կարաբչեվսկին հարցնում է. «Ձեր խօսքերը վերաբերում են միմիայն պաշտպաններին»։ Նախագահը պատասխանում է. «Ես գիտում եմ բոլոր կողմերին»։

Մարկ Զայցեվը՝ գործարանի հանգուցեալ տիրոջ որդին՝ բացատրում է, որ գործարանի տեղը պատկանում է հրեական վիրաբուժական հիւանդանոցին. իրանց հօր մահից յետոյ՝ զաւակները վճռեցին յաւերժացնել հանգուցեալի յիշատակը բուժարան հիմնելով և նրան կից աղօթատուն կառուցանելով, սակայն խնդրպրի մէջ աղօթատան համար յատկացված դահլիճը անուանված էր ճաշասենեակ, որպէս զի թոյլտուութիւնը շուտ ստացվի. մարտի 7-ին հիմնադրութեանը ներկայ էր ոստիկանութիւնը. վկայի հայրը սիրում էր իր երեխաներին և ոչն օրերը ընծաներ էր տալիս, որոնց թերում բաղարջ, որ պատրաստում են Գրիգօրիվայում։ Էտինգէրը առանց գըրագիտության է։ Էտինգէրը ասում է, որ առաջինը վըկայի կնոջ հարազատ եղբայրն է, երկրորդը՝ վկայի քրոջ տղան. Էտինգէրը առանց գըրագիտության ապրում էր վկայի բնակարանում 1910 թ. դեկտեմբերից մինչև 1911 թ. յունվարի 27-ը. անցաթուղթը ոստիկանութեանը ներկայացվեց մեկնելուց 4 օր առաջ. Էտինգէրը ուսել է Շվեյցարիայի պոլիտեխնիկումում, կիէվում աւարտել է բէալական դպրոցը, պոլիտեխնիկումը չէ աւարտել, ապրում է արտասահմանում, միջոցների տէր է, զբաղվում է երաժշտութեամբ։

Լանդաուն յայտնում է, որ ապրում է արտասահմանում, Կիէվումն ունի մայր, եղբայր, քոյր, Կիէվումն էր 1911 թ. նոյեմբերին, արտասահման վերադարձաւ դեկտեմբերի կէսերին։

Երդուեալ թարգմանի միջոցով հարցաքննվում է Յակոբ Էտինգէրը, որ խօսում է գերմաներէն։ Գրուզէնբերգի հարցին Էտինգէրը յայտնում է, որ ապրում է Գալիցիայում, հողատէր է և վաճառական, տ. Զայցեվայի եղբայրն է. վերջին անգամ Կիէվումն էր 1910 թ. դեկտ. 24-ից մինչև 1911 թուի յունվարը. Ռուսաստանում եղել է 10 տարի առաջ։ 1910 թ. ապրում էր փեսայ Մարկ Զայցեվի մօտ՝ որտեղ էր գրված՝ չը գիտէ։ Դատախազի հարցին պատասխանում է, որ 1910 թ. արտասահմանեան անցագիրը իր մօտ ունի. 1910 թ. եկաւ քրոջ հետ տեսնվելու, մասնաւորապէս փայտի ու ալիւրի գործերով. հրէերէն «ցադիկ» նշանակում է աստուածավախ մարդ։ Դատախազի այն հարցին, թէ ինչու նա ոչ-աստուածավախ մարդու չէ ճանաչում, իսկ Գալիցիայում ճանաչում է, վկան պատասխանում է, որ չէ հասկանում, թէ ինչ է ըմբռնում դատախազը «ցադիկ» ասելով։ Վկան գիտէ, որ գոյութիւն ունեն խասիդներ, որոնք ունեն ռաբբիներ։ Երբէք չէ լսել, որ խասիդիզմի հիմնադիրներից մինը Զալման Շնէէրսօնն է։ Բէյլիսին վկան տեսնում է առաջին անգամ՝ դատարանում։

—

Կիէվ, 6 հոկտեմբերի

Հարցաքննվում են մի շարք վկաներ ևս, որոնց ցուցումները հակասական են նկատվում նախնական քննութեան ժամանակ տուած ցուցմունքներին։ Կողմերը հարցաքննում են առանձնապէս Զայցեվի գործարանում ծառայող բանուորներին և աղուս տանողներին, որոնցից մեծ մասը ցուցում է տալիս յօգուտ Բէյլիսի։

Դատարանը որոշում է իրաւունք տալ դատախազին լրացուցիչ տեղեկութիւն ներկայացնել այն մասին, թէ ուր էր ապրում 1911 թ. և ուր է այժմ բնակվում Իզրայիլ Լանդաուն։

Վկայ Գաեվսկայան յայտնում է, որ ապրում էր Զեբէրեակօվայի մօտ ձմեռը 1911 թ. իբրև ընկերուհի, նայում էր տան տնտեսութեանը, փող չէր ստանում, թէև Զեբէրեակօվան նրան ցոյց էր տալիս իբրև սպասուհի. հեռացաւ, երբ իմացաւ, որ Զեբէրեակօվան մուտք անձնաւորութիւն է. նրա մօտ գալիս էին ծանօթները մի զգեստով, հեռանում ուրիշ զգեստով. յունվարին վկան լսեց հետևեալ խօսակցութիւնը Զեբէրեակօվայի մօտ. «Նա մեզ խանգարում է, նրան պէտք է բառնալ մէջտեղից». բացի Անդրիւշ Իւշչինսկիից, որ գընաց խոհանոց, ուրիշ կողմնակի ոչ ոք կար. վերջում Զեբէրեակօվան ծախեց վկային մի վերարկու, որ վկայից խլեցին իբրև գողացված։

Դէմ առ դէմ կանգնեցնելով, Վէրա Զեբէրեակը ասում է, որ Մինդեան տօնածառին երեխաները չարութիւն էին անում. նրանց մօտ էր Անդրիւշա Մայսարեանցն. Իւշչինսկին չը կար. Գաեվսկայան ծառայում էր իբրև սպասուհի, ստանում էր 3 ր., արտաքսվեց երեխաների հետ կռիւ վարվելուն պատճառով։ Գաեվսկայան պընդում է, որ սպասուհի չէր։ Զեբէրեակօվան յայտնում է, որ վերարկուի գործում դատարանը իրան արդար գտաւ։

Լանդաուն յայտնում է, որ Իզրայիլ Լանդաու գոյութիւն չունի. իր հայրը՝ Իզրայիլը մեռել է դեռ 1903 թ. Կիէվում և թաղված է հրէական գերեզմանատունը։

## ԲԷՅԼԻՍԻ ԳՈՐԾԻ ՇՈՒՐՋԸ

—

Բաղուի հրէաները ևս վճռել են մինչև Բէյլիսի գործի դատավարութեան վախճանը չը յանձնել ոչ մի թատրոն կամ այլ ներկայացում։

—

Կիէվում և Օդեսսայում մի շարք լրագիրներ ենթարկվեցին խոշոր տուգանքների՝ Բէյլիսի գործի առիթով։

—

Վ. Կօրօլենկօն Կիէվ գնալով վճռել է պաշտպանել դատարանում Բէյլիսին։

—

«Н. В.»-ում տպված է Վ. Օզանովի հետևեալ նամակը Ս. Եֆրօնին (լիտվինին)։

«Ձեր նամակը՝ յանուն Արդովի, որով դուք «երդվում եք Ամենակարող Աստուծով», թէ հրէաները ընտրալ սպանութիւններ չունեն, ընդհանրվում է այն շօշափելի, աշկարա փաստին, որ ամենքի առաջ դրված է ինչ-որ մէկի ձեռքով ընտրալ սպանված երեխայ։ «Չէ կարող պատահել», այլ «կայ»։ Ի՞նչ անել ուրեմն իրողութեան հետ, շօշափելի փաստի հետ։ Ո՞ւր փախչել աչքի տեսողութիւնից։ Եթէ անգամ ոչ դատավարութիւն, ոչ մի մեղադրական ակտ չը լիներ, այլ տրվեր սոսկ Ռուշչինսկիի լուսանկարը այդ մանր 13 վէրքերով՝ գլխին և միւս բոլոր անատոմիական, վերին սատիճանի նուրբ ու զգայական վէրքերով՝ մարմնի վրա, մարմինը անդամահատած բժշկի վկայութեամբ, թէ այդ վէրքերը ընկել են այնպիսի երակների մէջ, որպէսզի կարելի լինի քամել դարձեալ կենդանի էակից համարեա ամբողջ արիւնը օրգանիզմից, այդ դէպքում հանուր Ռուսաստանի համոզմունքը, որ «այդ ընտրալ սպանութիւն է», կը դառնար աներկբայ։

«Այժմ հարց է, թէ ո՞վ է մարդասպանը, ո՞վ է յանցաւորը։

«Սպանվածից արիւն քամելու, արնաքամ անելու մեթոդը վաղուց ատի գոյութիւն ունի միայն հրէաների մէջ և գործադրվում գանելուց յետոյ։ Մենք էլ այժմ չը գիտենք. գիտենք միայն, որ մեր լեզուն, ինչպէս և ուրիշ լեզուներ, ունի աւելի քան 300 հընչիւն։ Ս. Մեսրոպն էլ հարկավ նկատում էր բազմաթիվ՝ իրար շատ նման, բայց ոչ միևնոյն հնչիւններ։ Եթէ վերցնենք չորս բառ—նայել, ասան, անդամ, անբիծ—և լաւ ուշադրութիւն դարձնենք արտասանութեան վրա, կը տեսնենք, որ այս չորս բառի մէջ պատահող ն գիրը չորս տարբեր հնչիւն ունի. առաջինում պարզ, երկրորդում խուլ, գրեթէ անլսելի, երրորդում մի ռնգային արձագանք, իսկ չորրորդում նման մ-ի։ Սակայն այս չորս տարբեր հնչիւնների համար մի գիր է սահմանել ս. Մեսրոպը, որովհետև նա բարեբաղդաբար կազմնվված էր յունարէն, ասորերէն (գուցէ և Դանիէլեան) այբուբենների օրինակով, և միւս կողմից՝ որովհետև նա բարեբաղդաբար չունէր այնքան նուրբ լսողութիւն. հակառակ դէպքում նա մեզ կը տար ոչ թէ 36 գրից բաղկացած այբուբեն, այլ մի քանի հարիւր գրից՝ իր բոլոր վատ հետևանքներով։ Բայց երբ ս. Մեսրոպ, ուրիշ այբուբենների հետևողութեամբ և հնչիւնների նուրբ երանգները չը զանալով, որոշից բավականաչափ է նկատառնելով միայն հիմնական հնչիւնները, սրանով դեռ հարցը չը վճռվեց։ Հարցը մնում էր հարց. քանի հիմնական հնչիւն ունի հայերէնը։ Ենթադրենք թէ նա քաղմաթիվ բառեր տարրալուծելով և հիմնական հնչիւնները պայմանական գրերով նշանակելով՝ կազմել է արդէն մի այբուբեն՝ 32 գրով։ Նա դեռ երկմտութեան մէջ է. գուցէ բաց է թողել այնպիսի բառեր, որոնց մէջ պատահում են դեռ նոր հնչիւններ։ Շարունակում է նորանոր բառեր մտաբերել, տարրալուծել, համեմատել. գտնում է գարձեալ մի, երկու, երեք, չորս հնչիւն. գրերի թիվը հասնում է 36-ի։ Բայց ով է երաշխաւորում, թէ այբուբենը լրիվ է, նրանով կարելի է ամենն մի հայերէն բառ գրել։ Հէնց այս միտքը կարող էր նրան տանջել և տիխնների աշխատանք պատճառել։

Ստ. Մալխասեանց

դրդութեամբ արտայայտել. սրա հետ միասին՝ գուցէ այդ այբուբենը ունէր և այնպիսի գրեր, որոնց համապատասխան հնչիւնը չը կար հայերէնում։ Այս պայմաններում՝ Դանիէլեան այբուբենը նոյնքան իրաւունք ունէր հայերէն կոչվելու, որքան և պարսկերէն, յունարէն և այլն. որովհետև այդ այբուբենի որոշ գրերը նոյնպէս կը համապատասխանէին պարսկերէնի, յունարէնի... հնչիւններին, բայց նոյնպէս և չէին ունենայ այն բոլոր գրերը, որոնք հարկաւոր են յունարէնի, պարսկերէնի... բոլոր հնչիւններն արտայայտելու համար։

Մի պարզ օրինակ աւելի կը բացատրէ մեր միտքը։ Վերցնենք ռուսերէն հարուստ այբուբենը և փորձենք նրանով հայերէն գրել։ Շուտով կը համոզվենք, որ այդ այբուբենի 27 գիրը փոքր ի շատէ համապատասխանում են մեր լեզվի հնչիւններին, բայց ութ գիր (і, щ, ъ, ы, ь, ѣ, ѳ, ѵ,) միանգամայն ավելորդ են. միւս կողմից կը տեսնենք, որ մեր լեզուն ունի մի շարք հնչիւններ (ը, թ, ծ, հ, ձ, ղ, ճ, յ, ղ, ր, ւ), որոնց համար գրեր չը կան ռուսերէնի մէջ։ Ավելի մեծ տարբերութիւններ կը նկատէինք, եթէ ռուսերէնի փոխարէն վերցնէինք յունական կամ լատինական այբուբենը և նրանցով փորձէինք գրել։ Սրանից երևում է, որ մի որևէ այբուբեն ընդունակ է մասամբ արտայայտելու ուրիշ որևէ օտար լեզվի հնչիւնները, բայց երբէք լրիվ չէ համապատասխանում օտար լեզվի բոլոր հնչիւններին։ Ուրեմն և Դանիէլեան նշանագիրները՝ որևէ օտար լեզվի այբուբեն լինելով՝ մասամբ կարող էին արտայայտել հայերէնի հնչիւնները, բայց ոչ լրիվ և կատարեալ կերպով։ Եթէ այդ նշանագիրների տեղ Հայաստան բերված լինէր մի ուրիշ այբուբեն, սա էլ միևնոյն հետևանքին կը հասցնէր։

Բայց թէ ինչ հանգամանք առիթ է տալել կարծելու, թէ Դանիէլեան նշանագիրները հին հայերէն գրեր են եղել։ Ս. Մեսրոպի օրերում Արամ էր կոչվում Միջագետքը և Հիւսիսային Ասորիքը (Կորիւնն էլ գործ է ածում այս անունը—«հասանէր ի կողմանս Արամի, ի քաղաքս երկուս Ասորւոց»)։ Այս տեղում բնակող սեմական ցեղին պատկանող ժողովուրդը կոչվում էր արամայեցի, իսկ այս ժողովրդի լեզուն և այբուբենը, որ շատ հին ծագում ունէր, կոչվում էր արամէական։ Արամէական այբուբենը բազմաթիվ ճիւղավորութիւններ ունի, նրանից են ծագել քառակուսի հրէական և պալմիրական այբուբենները, վերջինից առաջացել է ասորական էստրանգելոն, որից ծագել են մի կողմից թաթար-մոնղոլական այբուբենները, իսկ միւս կողմից Նաբատեան այբուբենը, որ ծնունդ է տվել արաբականին։ (Շնիցեր, «Գրերի Պատմութիւն»)։ Շատ հաւանական է ենթադրել, թէ Դանիէլի մօտ գտնվածը որևէ արամէական այբուբեն է եղել, գործածութիւնից արդէն դուրս ընկած, օրինակ՝ պալմիրականը. իսկ «արամէական» բառը շփոթել են «արմէնական» կամ «արամեան» բառի հետ, որով օտարները կոչել են և կոչում են հայերէն։ Ուրեմն Դանիէլեան գրերը հայերէն կոչելու զրոյցը հիմնված է եղել մի թիւրիմացութեան վրա։

Ահա այս, թիւրիմացութեամբ հայերէն կոչված Դանիէլեան նշանագիրների վրա մօտ երկու տարի աշխատելուց յետոյ՝ ս. Մեսրոպ համոզվեց, որ չէ կարելի «մուրացված» այբուբենը կարկատելով մայրենի լեզվին յարմարեցնել. պէտք է անկախ աշխատանքի ձեռնարկել, ուսումնասիրել հայերէնի հնչիւնները և նրանց համապատասխան այբուբեն ստեղծել։ Բայց հեշտ է ասել՝ ուսումնասիրել լեզվի հնչիւնները. սրա համար հարկաւոր է լեզվագիտական պատրաստութիւն, նուրբ լսողութիւն, քերականութեան, մանաւանդ նրա հնչաբանական կանոնների գիտութիւն։ Ունէր արդեօք ս. Մեսրոպ հէնց սկզբից այս պայմանները։ Շատ անհավանական է։ Նա երբ ձեռնարկեց իր աշխատանքին՝ չէր էլ կարող երևակայել այն անհամար դժվարութիւնները, որոնք իր առաջ պիտի ելնէին։

Վերցնենք առաջին, տարրական հարցը, որին պէտք է պատասխանէր ս. Մեսրոպ.—քանի հնչիւն ունի հայերէնը։ Նա այս չը գիտէր սկզբում, և չիմացավ նաև գրերը գտնելուց յետոյ։ Մենք էլ այժմ չը գիտենք. գիտենք միայն, որ մեր լեզուն, ինչպէս և ուրիշ լեզուներ, ունի աւելի քան 300 հընչիւն։ Ս. Մեսրոպն էլ հարկավ նկատում էր բազմաթիվ՝ իրար շատ նման, բայց ոչ միևնոյն հնչիւններ։ Եթէ վերցնենք չորս բառ—նայել, ասան, անդամ, անբիծ—և լաւ ուշադրութիւն դարձնենք արտասանութեան վրա, կը տեսնենք, որ այս չորս բառի մէջ պատահող ն գիրը չորս տարբեր հնչիւն ունի. առաջինում պարզ, երկրորդում խուլ, գրեթէ անլսելի, երրորդում մի ռնգային արձագանք, իսկ չորրորդում նման մ-ի։ Սակայն այս չորս տարբեր հնչիւնների համար մի գիր է սահմանել ս. Մեսրոպը, որովհետև նա բարեբաղդաբար կազմնվված էր յունարէն, ասորերէն (գուցէ և Դանիէլեան) այբուբենների օրինակով, և միւս կողմից՝ որովհետև նա բարեբաղդաբար չունէր այնքան նուրբ լսողութիւն. հակառակ դէպքում նա մեզ կը տար ոչ թէ 36 գրից բաղկացած այբուբեն, այլ մի քանի հարիւր գրից՝ իր բոլոր վատ հետևանքներով։ Բայց երբ ս. Մեսրոպ, ուրիշ այբուբենների հետևողութեամբ և հնչիւնների նուրբ երանգները չը զանալով, որոշից բավականաչափ է նկատառնելով միայն հիմնական հնչիւնները, սրանով դեռ հարցը չը վճռվեց։ Հարցը մնում էր հարց. քանի հիմնական հնչիւն ունի հայերէնը։ Ենթադրենք թէ նա քաղմաթիվ բառեր տարրալուծելով և հիմնական հնչիւնները պայմանական գրերով նշանակելով՝ կազմել է արդէն մի այբուբեն՝ 32 գրով։ Նա դեռ երկմտութեան մէջ է. գուցէ բաց է թողել այնպիսի բառեր, որոնց մէջ պատահում են դեռ նոր հնչիւններ։ Շարունակում է նորանոր բառեր մտաբերել, տարրալուծել, համեմատել. գտնում է գարձեալ մի, երկու, երեք, չորս հնչիւն. գրերի թիվը հասնում է 36-ի։ Բայց ով է երաշխաւորում, թէ այբուբենը լրիվ է, նրանով կարելի է ամենն մի հայերէն բառ գրել։ Հէնց այս միտքը կարող էր նրան տանջել և տիխնների աշխատանք պատճառել։

Ստ. Մալխասեանց

է նրանց ձեռքով անասուն մորթելիս։ Այս ամենքին յայտնի է։ Հէնց այդ երկու իրերից բղխում է այդօրինակ անյողդողդ համոզմունքը։ Ես ուզղակի չեմ կարող, չեմ համարձակվի հաւատալ, թէ Ս. Սիքսոնը կամ Գրուզինբերգը իրանց հոգու մէջ ժիտեն այդ։ Եւ բովանդակ դատավարութիւնը ինձ պատկերանում է միանգամայն կեղծ, որովհետև ինչ հարկ կայ վիճել, երբ աչքերի առաջ դրված բացարձակ ըիտուալ է և նոյնքան պարզ մեթոդ հրէութեան։ Այն նուրբ ու գիտական մեթոդը, որպիսին ի հարկէ չէին կարող գործադրել Զերբերակները կամ Պրիլուցկին, որոնք հաւիւ թէ իմանան, որ մարդ «լեարդ» ունի ու ևս առաւել, որ գանգի տակ կայ «գլխուղեղի մեծ կոնք», որ ծակելու դէպքում տալիս է շատ առատ արիւնոսութիւն։

«Ո՞վ է։ Մեթոդը հրէական է, կը նշանակէ «հրէական ըիտուալ»։ Ու ձեր երդմանը ոչ՝ մինը ռուսներից չի հրաժարվի նեղհակել իր երդումը, որ բղխում է ակներև փաստից...»։

«Kiевлянинъ»-ի խմբագիրը բարեգործ Շախովի դիմումին գրաւոր խորին շնորհակալութիւն յայտնեց, բայց և հրաժարվեց ի պաշտպանութիւն հրէաների յօդուածը գրողի անունով թողակաւորի տեղ հիմնելու առաջարկութիւնից, որովհետև կարծում է, որ իր յօդուածներով թերթը կատարում է իր պարտականութիւնը։

Կիէվում նացիոնալիստները բոյկոտի են թարկեցին «Kiевлянинъ»-ը։

—

Մինսկում, Վարշավայում սօլդատները քարոզում են ջարդել հրէաներին։

—

Կիէվում յամառ լուրեր են պտտվում, որ Զամբսլօվսկին և Շմակովը դատախազի առջևցութեամբ կատենում են ընդհատել տալ Բէյլիսի գործը և առաջարկել դատի կանչել Բէյլիսի հետ նաև Վէրա Զերբերակին։

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

### ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ

—

Ստացանք Թիֆլիսում պ. Միքայէլ Աթաբէկեանից 25 ռուբլի։ Ուրեմն նախկին ստացած 277 ր. գումարի հետ (տես «Մշակ» № 219) ունենք 302 ռուբլի։

—

### ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

(Հեռագրով)

Շուշի, 5 հոկտեմբերի

Հ. Առաքելեանին, Թիֆլիս.

Շուշու թեմական դպրոցի հոգաբարձութիւնը, ընտրելով ձեզ իր ներկայացուցիչ, խնդրում է ձեզ բարեհաճել գնալ Էջմիածին, մասնակցել իր կողմից յօբելեանական հանդէսներին, լինել արտայայտիչ մեր բերկրութեան զգացմունքների՝ հայ ազգի պատմական հռչակաւոր օրվայ տօնախմբութեան առիթով։

Նախագահ հոգաբարձութեան՝ կառավարիչ Ղարաբաղի թեմի՝ Զաւէն վարդապետ

—

(Հեռագրով)

Շուշի, 5 հոկտեմբերի

Տիգրան Նազարեանին, Թիֆլիս

Ղարաբաղի թեմի ծխական ուսուցիչների անունից խնդրում եմ լինել պատգամաւոր, բարեհաճել ներկայ լինել Էջմիածնում յօբելեանական հանդէսներին, արտայայտելով Ղարաբաղի թեմի դպրոցների կողմից խնդակցութիւն պատմական այս նշանակալից օրվայ առիթով։

Ղարաբաղի թեմ. կառավարիչ՝

Զաւէն վարդապետ

—

Կ. Պոլիս, 28 սեպտ.

Ազնուաշուք Տիար

Համբարձում Առաքելեան, նախագահ Միացեալ Ընկերութեանց Կովկասի Օժանդակ Յանձնաժողովի.

Տնօրէն ժողովս նուիրական պարտք մը նկատելով իբրև Թիւրքահայաստանի մէջ գործող կրթական բարձրագոյն մարմին իր վայելուչ ու արժանաւոր բաժին ունենալ հայ գրերու գիւտի ու հայ տպագրութեան համազգային յօբելեանին մէջ, որ հոկտ. 12-ի ու 13-ի օրերը յաջորդաբար կը տօնուի նախ ս. Էջմիածնի և ապա Թիֆլիսի մէջ, կուգայ ներկայիս խնդրել Ձեզմէ, որ բարեհաճութիւն ունենաք պաշտօն ստանձնել իբրև մեր Կովկասի մասնաճիւղին նախագահը՝ «Միացեալը» ներկայացնելու այդ մեծահանդէս արարողութեանց մէջ, որուն կը մասնակցի բովանդակ հայութիւնը։

Կանխելով այս մասին մեր ջերմագին շնորհակալեաց հաւաստիքը, կը մնանք՝

Խորին յարգանօք

Ի դիմաց Հայոց Միացեալ Ընկ.

Տնօրէն ժողովոյ

Ատենապետ՝ Ա. Պ. Շմաւոնեան

Ատենադպիր՝ Հ. Իսագուլեան

—

Հայ տառերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ յօբելեանական հանդէսների առիթով՝ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը որոշել է հետևեալը. 1) Ընկ. կողմից ներկայացուցիչներ նշանակել պ. պ. Ս. Մելքումեանին և Կ. Խալաթեանին Էջմիածնում կայանալիք հանդէսներին մասնակցելու համար։ 2) Զրխարար բաժանել Յովհաննեան, Գայլանեան և Ներսիսեան դպրոցների բարձր դասարանների աշակերտ-աշակերտուհիներին Ս. Պողոսեան ֆոնդի գումարով հրատարակած «Ս. Մեսրոպ» գրքից։ 3) Խորհրդի ամբողջ կազմով ներկայ գտնվել Թիֆլիսում կայանալիք յօբելեանական հանդէսներին։

—

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը որոշել է Հայոց Համազգային Յօբելեանի օրը շնորհաւորական հեռագիր ուղարկել Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին և յանձնել քաղաքագլուխ Ա. Խատիսեանին նաև անձամբ շնորհաւորութիւն յայտնել՝ կիրակի օրը Ներսիսեան դպրոցում կայանալի ակտի ժամանակ։

—

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան մէջ հայ ծառայողները բացել են իրանց մէջ հանգանակութիւն յօգուտ դպրոցական ֆոնդի, ի յիշատակ Համազգային Յօբելեանի։

Ախալցխայի սուրբ Փրկիչ եկեղեցու ծխական հոգաբարձութեան կողմից ներկայացուցիչներ նշանակվել են Էջմիածին գնալու համար հոգաբարձուներ՝ Գ. Սարաբեանց և Մ. Սաղաթելեան։

—

Բագուի հայ-աւետարանական (լիւտերական) համայնքը մտադիր է, ինչպէս հաղորդում է «Баку» թերթը, նոյնպէս տօնել համազգային յօբելեանը և մասնակցել է յօբելեանը տօնախմբող յանձնաժողովին։

### ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱԻԹԱՇԽԱՐՀԻՑ

XVIII

Մենք շատ անգամներ ենք առիթ ունեցել խօսելու մեր հասարակական հիմնարկութիւնների և առհասարակ Բագուի հայ հասարակական գործերի մասին. շատ անգամ ենք կրկնել, որ մեր հասարակական գործերը կապալով է վերցրել մարդկանց մի փոքրիկ խմբակ և աշխատում է շատ պինդ պահել այդ գործերը իր ձեռքին ու ծառայեցնել իր նպատակներին։

Իսկ հասարակութիւնը, իսկ մեր՝ տեղը եկած ժամանակը մեծ-մեծ բրթող ինտելիգենցիան մաքը մատին չի խփում հասարակութեան անունից խօսող, նրա անունը շահագործող մարդկանց այդ խմբակի արածների դէմ բողոքելու։

Հեռու չը գնանք, վերցնենք նորագոյն փաստերից մէկը։

Հրապարակի վրա են հայ տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յօբելեանները։ Ազգային այդ մեծ յօբելեանի տօնակատարութեան մէջ, պարզ բան է, ամենալայն մասնակցութիւն պէտք է ունենան հասարակութեան բոլոր խաւերը։

Այդպէս է արվել ամեն տեղ. յօբելեանական հանդէսները կատարվել են և կատարվում են հասարակութեան կողմից, հասարակութեան մէջից ընտրված մարդկանց ձեռքով և հասարակութեան հաւանութիւնը գտած ծրագրով։

Սակայն այդպէս չէ մեզ մօտ՝ Բագուում։

Յօբելեանական տօնակատարութիւնները բացել է անցեալ տարի Կուլտուրական Միութեան հրատարակչական սեկցիան մի երեկոյթով, որի արդիւնքը սեկցիայի դրամարկղն է մտել, և ոչ ոք նրա մասին տեղեկութիւն չունի։

Մի ամբողջ տարի լռութիւն է պահպանվել, ոչինչ չի արվել յօբելեանների համար, և միայն այժմ նորից զարթնել է Միութեան սեկցիան։

Մենք ի հարկէ ոչինչ չունենք և չենք էլ կարող ունենալ, երբ տօնակատարութեան նախաձեռնութիւնը իր վրա է վերցնում Միութեան հրատարակչական սեկցիան. այդ այդպէս էլ պէտք է լինի, որովհետև սեկցիան իր նպատակներով շատ մօտ է այդ գործին։ Սակայն սեկցիան միայն նախաձեռնող կարող է լինել, ուրիշ ոչինչ. ազգային մեծ յօբելեանների կատարման ձևը, կազմակերպութիւնը պէտք է հասարակութեան ձեռքին լինի, հասարակութիւնը պէտք է ինքը ընտրէ յանձնաժողովներ թէ տօնը կատարելու և թէ ժողովարարութեան համար։

Այն ինչ՝ սեկցիան ինքը որոշում է տօնել յօբելեանները, որոշում է տօնակատարութեան ձևն ու ծրագիրը, ընտրում կօմիսիա և յեռոյ յայտարարում, որ «ով ցանկանում է մասնակցել յօբելեաններին և իր աշակցութիւնը ցոյց տալ Միութեանը, կարող է դիմել Միութեան հրատարակչական սեկցիային»...

Այդ մի ծաղր է, ծաղր հասարակութեան հացէին, որը սակայն այդ հասարակութիւնը լուռ ու մունջ տանում է և միշտ տանում է։

Մի կուլտուրական միութիւն, մի բարեգործական ընկերութիւնը և այլն կարող են նախաձեռնող, հրաւիրող հանդիսանալ որևէ ազգային տօն կատարելու համար, բայց նրա գործադիր մարմինը, նրա իրաւատէրը։

Իրաւատէրը միայն հասարակութիւնն է և այդ հասարակութիւնից ընտրված մարմինները կարող են և պէտք է զեկավարեն յօբելեանական տօնակատարութիւնները, իսկ զանազան հիմնարկութիւններ միայն մասնակցել կարող են իրանց ներկայացուցիչների միջոցով, ուրիշ ոչինչ։

Այդպէս է ամեն տեղ, նոյն իսկ մեր հայկական իրականութեան մէջ։

Սակայն այդպէս չէ լինում Բագուում, որովհետև մեր ազգային կապալառուները հաւատացած են, որ հասարակութիւնը լուռ ու մունջ ականատես է լինելու միայն նրանց արարքներին, չի բողոքելու, ուրեմն ինչու չօգտվել դէպքից և պղտոր ջրում ձուկ չորսալ։

Սակայն մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ պէտք է հայ հասարակութիւնը միայն թամաշաչիի դեր կատարի հասարակական գործերի վերաբերմամբ, թողնելով ամեն ինչ մարդկանց մի խմբակի ձեռքին։

Մեր հասարակական գործերի մի հիւանդոտ կողմն է այդ, մի թարախոտ վէրք է, որ բժշկութեան է կարօտ և շուտափոյթ բժշկութեան, այլապէս հասարակութեան անուանով, ազգային գործունէութեան վարագոյրի ետևում մարդիկ միշտ էլ իրանց անձնական ցանկութիւնները ի կատար կածեն։

Վաղարշակ Թումանեան

Բագու.

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

—

Հոկտ. 4-ին Հայոց Դրամ. Ընկ. դահլիճում կայացաւ հայ դերասանների ընդհ. ժողովը։ Հաւաքվել էին մօտ 30 դերասան։ Նախագահ ընտրվեց Արաքսեան, իսկ քարտուղար՝ Սարգսեան։

Նախկին ժողովի արձանագրութիւնը կարդալուց յետոյ ժողովականները երկար ու մանրամասնին ծեծեցին Դրամ. Ընկ. գանձարանում գտնվող 900 ր. հարցը։ Սակայն շատերը ցանկացան՝ նախ կազմված տեսնել հայ դերասանական միութիւնը, ապա մտածել գանձան աղբիւրների և մանաւանդ ֆոնդի աճեցման մասնաժողովի ընտրութեան մասին։ Միութիւն կազմելը թողնելով ապագային, ժողովը զբաղվեց մասնաժողովի ընտրութեան հարցով։

Ֆոնդի ծրագիրը մշակող և ընդհանրապէս այլևայլ աղբիւրներով այդ ֆոնդը աճեցնելու համար մասնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Արաքսեան, Երիցեան, Միրզաեան և Սարգսեան։

—

Հայ դերասանական պրոֆեսիոնալ միութիւն ունենալու գաղափարը առաջին անգամ չէ որ հրապարակ է հանված։ Սկսած 1906 թվից մի խումբ հայ դերասաններ ամեն կերպ աշխատել են հայ թափառական դերասանին մի դրօշի, մի ընկերութեան շուրջը հաւաքել, բայց ամեն անգամ, քար անտարբերութեան հանդիպելով, գաղափարը չորացել է իր սաղմում։

Այսօր տեսնում ենք, որ բոլոր «վտանգները» վերացված են, և հայ դերասանութիւնը, վերջապէս, կազմելու վրա է հայ դերասանական միութիւնը։

Եւ դերասանները կազմելով այս միութիւնը՝ կազատվեն այն պարբերական պատահականութեանց մղձաւանջից ու յարատև թիւրիմացութիւնների էպիդեմիայից, որոնք իշխում են թատրոնական աշխարհում։

Առաջին գլխաւոր քայլն արված է արդէն։

Դերասանական նորակազմ մասնաժողովին մնում է, որ նա որքան կարելի է մօտ ապագայում՝ շատացնէ այն 900 ր. ֆոնդը, որը ստացել է Հայոց Դրամ. Ընկերութիւնը՝ հիւանդ և աշխատանքից զուրկ դերասանների անունով։

Հասարակութիւնն էլ իր հերթին իր նպաստներով զօրավիգ կը հանդիսանայ ժողովրդի մէջ և ժողովրդի համար գործող հայ դերասանի ապահովութեանը և այդպիսով տարիների ընթացքում սերմերը կաճեն, կը բազմանան, և շատ ու շատ բեմական գործիչներ կը թեթևանան ծանր ու դժուարին բեռան ճնշումից։

Աշխատաւոր

### ՄԻ ՀԱՄԱԿՐԵԼԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ

—

Կ. Հ. Բարեգ. Ընկ. Պեատիգօրսկի ճիւղը որոշել է հիմնել Պեատիգօրսկ քաղաքում մի բուժարան-հանրակացարան (սանատորիա), Մաշուկ լերան ստորոտում, հայ մտքի և գրչի և դպրոցի ուժասպառ աշխատաւորների համար։ Ի նկատի ունենալով որ այդպիսի մի սանատորիա միայն տեղական նշանակութիւն չունի, այլ ընդհանուր, և ճիւղը անկարող է իր սեփական միջոցներով գլուխ բերել այդպիսի մի ձեռնարկութիւն, ճիւղի վարչութիւնը դիմել է Ընկերութեան կենտրօնին, որ թէ սա և թէ Ընկերութեան միւս ճիւղերը օժանդակ հանդիսանան իրան։ Ինչպէս մեզ հաղորդում են, կենտրօնը համակրութեամբ է վերաբերվել այդ առաջարկին և որոշել է խնդիրն առաջարկել Ընկ. ընդհանուր ժողովին, որ նշանակված էր կիրակի, հոկտ. 6-ին, և որը սակայն չը կայացաւ և յետաձգվեց։ Այդ խնդրի համար Պեատիգօրսկից յատկապէս եկել է Թիֆլիս ճիւղի նախագահ Աբրահամ քահ. Շախնազարեանց։

Մենք յոյս ունենք, որ առաջիկայ ընդհանուր ժողովը նոյնպէս համակրութեամբ կը վերաբերվի խնդրին և միջոցներ կը գտնէ ձեռնարկութեան իրագործման համար։

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Տակաւին պաշտօնական վաւերացումը ստացված չէ Տօքոլի եպիսկոպոս Ալեքսէյին Վրաստանի էկզարխ նշանակելու մասին, չը նայած որ մայրաքաղաքի թերթերը տալիս են նրա կենսագրականը։ Ծնվել է 1853 թ. հոկտեմբերի 5-ին, ունի աստուածաբանութեան մագիստրոսի աստիճան, վարել է մի քանի հոգևոր պաշտօններ։ Նոր էկզարխը, միևնոյն թերթերի տալով, հանդիսանում է հանդուգնաբար Ինոկենտի Կրասնոգորսկի համակրելի հանգուցեալ Ինոկենտիի համախոհ։ Նրա նշանակումը եղաւ ռուսաց սինոդի օրէնքպրոկուրոր Սաբլէրի կամքի հակառակ և փոխարքայի ցանկութեան համաձայն։

✦ Թիֆլիսում ստացված տեղեկութիւնների համաձայն, Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի Թիֆլիս գալը սպասվում է հոկտ. 12-ին։

✦ Պետերբուրգի բարձր բիւրոկրատական շրջանակներում հարց է յարուցված հիմնելու Ռուսաստանում կանցլերի պաշտօն, որ լինելու է կառավարութեան գլուխ։ Կանցլերի թեկնածու անուանում են Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին։

✦ Հոկտ. 4-ին նահանգական ատեանը լսելով Թիֆլիսի քաղաքային դումայի որոշումը՝ թէ ցանկալի է, որպէսզի ձայնաւոր Սուլթրիձէն հեռացվի քաղաքային դործերից և հրաժարվի ձայնաւորի և գործադիր մասնաժողովների անդամի կոչումից, որոշեց. չը մանելով ըստ էութեան գործի հանգամանքների քննութեան մէջ, որ յարուցեց քաղաքային դումայի որոշումը, բայց գտնելով այդպիսին նրա իրաւասութեանը չը վերաբերող, դումայի որոշումը բեկել։

✦ Կովկասի փոխարքան դէմ է Սև-ծովի նահանգը փոխարքայութիւնից անջատելուն։

✦ Փիթօյհանների նաւթային ընկերութիւնը իր 3 միլիոն դրամագլուխը դարձնում է 18 միլիոն ռուբլի և ձեռք է բերում Աւան-Իւղբաշեանի և ուրիշների նաւթահանքերը։

✦ «Кав.»-ին հեռագրում են Թաւրիզից. «Հոկտեմբերի 1-ից դադարել է ռուս վասիլէվի աւտոմօբիլների երթևեկութիւնը Զուլֆայի և Թաւրիզի միջև։ Այդ էժան ու յարմար հաղորդակցութեան դադարումը անկասած վատ կազդէ մեր բամբակողմանի շահերի վրա Հիւսիսային Պարսկաստանում, ուր գերմանացիք և աւստրիացիք յամառութեամբ լայնացնում են իրանց ազդեցութիւնը»։

✦ Լոյս տեսաւ «Տարազի» սեպտեմբերի համարը, իր սովորական շքեղ և գեղեցիկ հրատարակութեամբ։ Զետեղված են պատկերներ և նկարներ 1) Շուշու թեմական դպրոցի յօբելեանական հանդէսների, 2) հանգուցեալներ՝ Յովհաննէս Տէր-Մարկոսեանի, Վրաստանի էկզարխ Ինոկէնտիի, Աւգուստ Բեբելի, Հանրի Օշֆօրի և 3) կենդանի մի քանի անձանց՝ պրինց Միրզա-Ռիզա-խանի, կոմս Ցեպպելինի, Գրիգոր Բալասանեանի, Մ. Տէր-Յակոբեանի, Վասիլի Ղորղանեանի, Ե. Բաղդասարեանի երգեցիկ խմբի (Շուշում) և Թիֆլիսի արքունի թատրոնի օպերային խմբի։ Այդ համարում տպված է և «Տարազի» ողջոյնի ձօնը «Рус. Вѣд.» լրագրին, սրա 50-ամեայ յօբելեանի առիթով։

✦ Բուխարեստից հեռագրում են, որ գերված միլիոնատէր Անանեանի ազգականները, երկիւղ կրելով նրա կեանքի համար, բանակցութիւններ են տվել աւազակների հետ։

✦ Մի քանի ժամանակ առաջ Եգիպտոսից Կովկաս եկաւ «Յուսաբեր» թերթի խմբագիր Արմենակ Մէօթէէտեան, նպատակ ունենալով ծանօթանալ հայ ժողովրդի և հայ գործիչների ու առհասարակ հայ գործերի հետ։ Այդ նպատակով նա մի քանի շաբաթ մնաց Թիֆլիսում, ապա ճանապարհորդեց Ալեքսանդրօպոլ, Անի, Երևան, Էջմիածին, Սանահին, Սևան և անցեալ շաբաթ Բաթումի վրայով գնաց Կ. Պոլիս, այդտեղից Եգիպտոս վերադառնալու համար։ Տրապիզոնից մի նամակով Ա. Մէօթէէտեան յայտնում է, որ իր ճանապարհորդութիւնից շատ գոհ է մնացել և ուրախ է, որ կարողացաւ ճանաչել կովկասահայ եղբայրներին և պէտք է աշխատէ, որ թիւրքահայ գործիչները աւելի յաճախ և աւելի մեծ թվով գան Կովկաս շփվելու ռուսահայերի հետ։

✦ Թէ Թիֆլիսի և թէ Բագուի բոլոր լրագիրները—ռուս, հայ, վրացի—կիրակի, հոկտ. 6-ին, համակրական և ողջոյնի յօդուածներ են նուիրել «Рус. Вѣд.» լրագրի 50-ամեայ յօբելեանին։ Բացառութիւն կազմել է միայն և եթ «Հօրիզոնը», որ այդ օր հարկ է համարել իր լրագրի գրեթէ 1/4 մասը նուիրել Հ. Առաքելեանին։ Ահա ձեզ և ամենօրեայ քաղաքական թերթ, որ յաւակնութիւն ունի նոյն իսկ իրան առաջնակարգ համարելու, բայց մոռանում է մի հատիկ ողջոյնի խօսք ասելու այն օրը, երբ առաջադիմական բանակը տօնում է իր կրօնաւորագոյն օրգանի 50-ամեայ յօբելեանը։ Այդ դէպքը շատ ընորոշ է, ցոյց տալու համար, թէ այդ թերթը որքան բարձր է դասում նեղ թաղիքական շահերը ընդհանուր շահերից, ինչպէս արեց և Հայ Գրողների Ընկերութիւնը դպրոցական ֆոնդի վերաբերմամբ։ Հ. Առաքելեանին հայոհայելը, նրա արտաքին դէմքը, նրա շարժումները, խօսքերը ծաղրելը աւելի կարեորութիւն ունի չակերտաւոր արմատական թերթի համար, քան մամուլի մի արմատական օրգանի 50-ամեայ յօբելեանը։ Երջանիկ թերթ և երջանիկ ընթերցողներ։

✦ «Р. Вѣд.»-ի 50-ամեայ յօբելեանի առիթով բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ ուղարկվեցին Թիֆլիսի և Բաքուի մամուլի, նայնպէս և զանազան կրթական ու կուլտուրական հաստատութիւնների կողմից։

✦ Արամ Բաֆֆին, որ ուղեկցել էր անգլիացի ճանապարհորդ Բէկստոն եղբայրների կատարած ճանապարհորդութեանը Թիւրքահայաստանում, վաղը, չորեքշաբթի, ամսոյս 9-ին, մի դասախօսութիւն է կարդալու իրանց կատարած վերջին ճանապարհորդութեան մասին։ Դասախօսութիւնը տեղի կունենայ Կ. Հ. Բ. Ընկ. շինութեան մէջ (Աբասաբադսկայա հր. № 7) երեկոյեան ժամը 8-ին։

✦ Յիշեցնում ենք, որ այսօր Գրականագեղագիտական Սալօնում տեղի է ունենալու զրոյց հայերէնի ուղղագրութեան մասին։ Ցանկալի է մասնագէտների, դրականագէտների, ուսուցիչների և այդ խնդրով հետաքրքրվողների ներկայութիւնը։ Մուտքը ազատ է։ Սկիզբն է ժամը 8-ին։

✦ Զինուորա-պատմական բաժանմունքի կառավարիչ, հանգուցեալ պատմաբան գեներալ Պոտտոյի փոխարէն, նշանակվել է գնդապետ Սիմէօն Էսադէն։

✦ Բոստօվի Դ./վ. էլեքտրաքարշի ծառայողները ևս բաւարարութիւն ստացան իրանց տնտեսական պահանջների համար։ Ծախքերը աւելանալու են այսուհետև 35 հազար ռուբլով տարեկան։

✦ Թիֆլիսի պօստ-հեռագրական շրջանի կառավարիչը մեկնեց Երևանի և Կարսի նահանգները՝ տեղական պօստ-հեռագրական հիմնարկութիւնների գործը քննելու համար։

✦ Մեզ խնդրում են տպել, որ հանգ. Ստեփաննոս Յարութիւնեան Յովհաննէսեանի զաւակները, ի յիշատակ իրանց թանկագին հօր, փոխանակ հոգեհացի, նուիրում են 100 ր. յօգուտ Ախալցխայի ծխ. դպրոցի նոր շէնքի կառուցման։

✦ Կովկասեան Հայուհեաց Բար. Ընկերութեան վարչութիւնը շնորհակալութեամբ ստացաւ տիկ. Դշխուհի Յովհաննէսեանից 25 ր. ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնու՝ Ստեփաննոս Յովհաննէսեանի, յօգուտ կարի ու ձևի դպրոցի խեղճ աշակերտուհիների։

✦ Ալեքսանդրօպոլցի յայտնի հարուստ Ռուբէն Դրամբեանը, լրագիրների ասելով՝ իր մայրենի քաղաքին նուիրել է 50,000 ր.։

✦ Դանոնակից մեզ գրում են. «Այս տարի բամբակացանը խիստ զգալի կերպով վնասվեց երաշտից. այժմ էլ պակասը լրացնելու վրա է անձրևը։ Այսպէս է չարքաշ գիւղացու վիճակը. բնութիւնն անգամ չէ խնայում նրա քրտինքը և թոյլ չէ տալիս իր վաստակածը բնական արգար ընթացքով վայելելու»։

✦ Կարսից մեզ գրում են, որ հանգ. Ս. Զալթուկեանցի կտակած 25,000 ր. գումարը յօգուտ այդ քաղաքի հայոց նորակառոյց եկեղեցու՝ չէ բաւում եկեղեցու շինութիւնը գլուխ բերելու, ուստի գործին գլուխ անցած մարդիկ սպասում են, որ նոր բարերարներ հրապարակ կը գան՝ յիշեալ եկեղեցու շինութիւնը վերջնականապէս աւարտելու համար։

# ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 2 հոկտեմբերի

Բուռն զայրոյթ զգացինք, կարդալով «Մշակի» մէջ «Բիւզանդիոնից» արատաւորված լուրը այն մասին, որ սրբազան Օրմանեանի հիւանդութեան ժամանակ Վիէննայի Մխիթարեան հ. Մէնէվիշեանը անկոչ կերպով գաղտագողի ներս է սպրդել հիւանդի մօտ և ջանացել է նրան դաւանափոխ անել, կաթոլիկութեան դարձնել, թէպէտ և ապարդիւն է անցել իր ջանքը։

Օրմանեանը, հայոց եկեղեցու ծոցը դաստիարակուց յետոյ, տասնեակ տարիներ գրել է և գործել իբրև ուսուցիչ, քարոզիչ, վանահայր, առաջնորդ, պատրիարք և գիտնական, գրել և գործել է հրապարակով։ Ի՞նչն էր խանգարում հ. Մէնէվիշեանին՝ հէնց այդ տասնեակ տարիներում նոյնպէս հրապարակ գալ և խօսքի այժով, փաստերով հերքել Օրմանեանի դաւանութեան սխալմունքները, եթէ կային, և նրա հետ թէկուզ ուրիշ շատերին էլ դարձնել դէպի կաթոլիկութիւն։ Բայց մանել մի հիւանդ ծերունու մօտ գաղտագողի կերպով, յուսալով որ հիւանդութեան ու ծերութեան պատճառով թուլացած կը լինեն նրա մարքի կորովը ու կամքի ոյժը, որ գուցէ մօտալուտ օրհասական ժամի տագնապից լքումն է տիրում նրա հոգուն, և այսպիսի դրութեան մէջ նրան դայթակղեցնել խորամանկ միջոցներով—սա նշանակում է անզէն, անպաշտպան մարդու վրա յարձակվել ետևից։

Հ. Մէնէվիշեանը ի փառս հռոմէական եկեղեցու չը խղճահարվեց բարոյական սպանութեան մի փորձ կատարել։ Ինչպէս յայտնի է, սրբազան Օրմանեանը հասուն հասակում, ներքին համոզմամբ կաթոլիկ եկեղեցուց հրաժարվեց և մտաւ հայոց եկեղեցու գիրկը։ Նրա քաղաքական և հասարակական գործունէութիւնը ունեցաւ բազմաթիւ կողմ և անկողմ, խիստ և ապերասան քննադատողներ, ինչպէս և շատ պաշտպաններ. բայց որքան մեզ յայտնի է, ոչ ոք կասկած չը յարուցեց նրա գարձի անկեղծութեան մասին։ Արդ՝ ինչ կը դառնար սրբազան Օրմանեանի բարոյական պատկերը, եթէ նաչ

մարմնի և հոգու թուլութեան բոպէին, հրապուրվէր հ. Մէնէվիշեանի գայթակղականն խօսքերից և դաւանափոխ լինէր։ Նա բարոյապէս ընդմիշտ կը թաղէր իր անցեալն ու ապագան. նա բոլորի կողմից կը համարվէր մի վարպետ կեղծարար, որ տասնեակ տարիներ խաբել ու մոլորեցրել է հայ ժողովուրդը և հասել եկեղեցական և ազգային բարձրագոյն աստիճանների, նոյնիսկ կաթողիկոսական գահի թեկնածու ընտրվել ժողովրդի հոգ բաղմութեան կողմից, և միայն կեանքի վերջալոյսին դիմակը բացել։ Հ. Մէնէվիշեանը այնքան անզգայ գտնվեց, որ ընդունակ եղաւ այսպիսի բարոյական մահացու հարուած հասցնել անմեղին։ Բարեբաղդաբար՝ վեմի նման հաստատուն համոզմունքի հանդիպեց ստոր հարուածը, և գայթակղիչը լսեց «երթ յետս իմ, սատանայ» խօսքերը։

Հայը Մէնէվիշեանը փորձեց սրբազան Օրմանեանին դէպի կաթոլիկութիւն դարձնել հայոց եկեղեցու դաւանութիւնից. այն ազգի, որի անդամը լինելու պատիւն ունի ինքը, յամօթ հայ ազգի և այն եկեղեցու, որ իր 1600-ամեայ հնութեամբ, իր գրաւոր հերոսական ինքնապաշտպանութեամբ, իր ստեղծած ազատ ժողովրդական սկզբունքներով, համբերողութեամբ պատկառելի է նաև ոչ-քրիստոնեայի համար։ Իսկ այդ «հայ» և «քրիստոնեայ» Մէնէվիշեանը դէթ մի փոքր պատկառանք չը զգաց դէպի հայ ազգն ու նրա եկեղեցին, այլ ջանաց ազգային, մայրենի եկեղեցու ծոցից կորզել, հանել նրա բարձրաստիճան պաշտօնեային, իբրև մի մոլար դաւանութիւնից, և սրանով անարգեց հայ ազգն ու նրա ազգային եկեղեցին։

Դժուար, շատ դժուար բան է ոճիրներ գործել «ad majorem Dei gloriam». Պէտք է հրաժարվել պատուից և, որ գլխաւորն է, պէտք է հրաժարվել բանականութիւնից։

Բժ. Բ. Աղասարեան, Կ. Տէրեան, Ստ. Մալխասեանց, Ա. Կանայեան, Մ. Աստիկեան, Ա. Նազարէթեան, Արշակ Առաքելեան, Աւ. Դաւթեան, Վ. Հայկազն։

—

Բագու, 28 սեպտեմբերի

Լաւ չեմ յիշում՝ «Հօրիզօնի» որ №-ի մէջ էր, բայց լաւ յիշում եմ, որ ախոյեն 15-ից յետոյ էր, Ռուբէն Օհանջանեանը «Մշակի» Բագուի թղթակցներին կապալառու և կապիտալիստների պաշտպան է յայտարարում, որովհետև, ըստ Ռ. Օհանջանեանի, թղթակիցները անձնական գործերով կապված են հարուստների հետ և այլն...

Թէ որքան ճշմարտութիւններ կան գառան հագուստ հագած Ռ. Օհանջանեանի այդ խօսքերի մէջ, դա մէկ Աստուծոյ է յայտնի, մէկ էլ իրան. իսկ «Մշակի» ընթերցողները, մանաւանդ Բագուի ընթերցողները, գիտեն, որ դա մի չարամիտ զրպարտութիւն է, որի շարժառիթը կարող է յայտնի չը լինել միայն նրանց, որոնք չեն ճանաչում Ռ. Օհանջանեան անուանեալին։

Սակայն մի բան ընդունենք, որ թղթակիցները անձնական գործերով կապված են կապիտալիստների հետ. արդ, մթթէ դա խանգարում է գրագէտ մարդուն թղթակցութիւններ գրելու։

Հայ թերթերի՝ «Մշակի», «Հօրիզօնի», «Հովիտի», «Տարազի», գաւառ. բոլոր հրատարակութիւնների, Պոլսի, Ամերիկայի և այլ վայրերի թերթերի թղթակիցներից՝ Ռ. Օհանջանեանը կարող է ցոյց տալ 3%, որ գործ չունենան ինչպես ունորի, նոյնպէս և չունորի հետ։ Կարող է Օհանջանեանը ցոյց տալ հազար թղթակցութիւններից 2%, որ հօնորար ստանալիս լինեն - ողողարձ կամ ռոճիկ—բացի խմբագրական պաշտօնեաներից։ Ի հարկէ ոչ, որովհետև հայ լրագրութիւնը հնար չունի բոլոր թղթակիցներին վարձատրելու։ Հետևաբար թղթակիցը իր ապրելու միջոցները պիտի ձեռք բերի իր սեփական գործերով, կամ այս ու այն ունորի, գործատիրոջ մօտ՝ գրասենեակում, նաւթանդրում, վաճառատանը, գործարանում և այլ հաստատութիւններում ծառայելով։

Ուսուցիչները, որոնք հայ լրագրութեան մէջ թղթակիցների մեծ տոկոս են կազմում, նրանք անգամ գործ ունեն կապիտալիստի հետ հէնց իրանց մտաւորական տեսակէտից, որոնցից ստանում են ռոճիկներ և որոնց հետ շփվում են։ Իսկ այն ուսուցիչները, որոնք թողել են ուսումնարանները և չաղ ռոճկի եաւից վազելով՝ ծառայում են մանաւոր մարդկանց մօտ, ոչ Օհանջանեանների, այլ կապիտալիստի, նոյնպէս թղթակցում են լրագիրներին։ Այդպէս են ռուս, հայ, թուրք ուսուցիչները։ Ուրեմն, ըստ Ռ. Օհանջանեանի, այդ բոլոր թղթակիցները պիտի գովեն կապիտալիստին, որովհետև նրա հետ գործ ունեն...

Ռ. Օհանջանեանը ուրիշներին էլ իր արշինովն է չափում. նա ինքն էլ լաւ գիտէ, որ իր այն տողերը, որոնք տպվեցին «Հօրիզօնի» մէջ «Մշակի» թղթակիցների և «Մշակի» հասցէին, սուտ և անտեղի են. սակայն նա այլ նպատակ ունի և իր նպատակին հասնելու համար է ցեխ շպրտել «Մշակի» թղթակիցներիս հասցէին։

Ռ. Օհանջանեանը առանց գրելու, առանց ջուր պղտորելու, մէկի կամ միւսի պոչից բռնելու ապրել չէ կարող։ Հէնց սկզբից նա նպատակ չէ դրել մաքուր լրագրող լինելու, այլ միշտ էլ անձնական հողի վրա է դրել իր գրիչը, խմբագիրների, հրատարակիչների հաւատն ի չարն է գործ դրել և շարունակում է ապականել անծանօթ շըրջանները։

Նա մի սոսկալի ու ամենախայտառակ ապրքի համար հրապարակէրէն վռնտվեց «Մշակից» դեռ տարիներ առաջ, ապա վարակիչ բացիլի նման սողալով մտաւ մի շարք խմբագրատներ, որոնցից նոյնպէս վտարվեց, իսկ վերջերում կանգ առաւ «Բագուի Զայնի» մէջ։ Սակայն «Բագուի Զայնը» կարճ ժամանակում տեսաւ, որ Ռ. Օհանջանեանը ոչ թէ իրան նման է, այլ նրա նման անգամ չը կայ, ուստի երկու ամիս առաջ այդ թերթի էջերն էլ փակեցին նրա առաջ բաւական չէր, այլ և խմբագրութիւնը հրապարակով ներողութիւն խնդրեց Սէր-Բաղաքի ծիսատէր Ներսէս քահանայ Տէր-Կարապետեանից, որին ամենասուտ և ամենատոր կերպով զրպարտել էր Ռ. Օհանջանեանը «Բագուի Զայնի» էջերում՝ շահագործելով այդ վերջինիս Զրպարտութիւնը այնքան ստոր ու զզուելի էր, որ հայը Ներսէսը խմբագրութեան հրապարակային ներողութիւնը չը բաւականացաւ և Օհանջանեանին յանձնեց քննիչի ձեռքը։

Ռ. Օհանջանեանին յայտնի է, որ ես համ գործ ունեմ բանուորների հետ, համ էլ կապիտալիստների. արդեօք չէ կարող նա իմ բաղմաթիւ թղթակցութիւններից, յօդուածներից մէկը մատնանշել, ուր ես անտեղի կերպով մէկ կամ միւս դասակարգին գոված կամ պարսաւած լինեմ ու ճշմարտութիւնը ասած չը լինեմ։

Բայց գաղտնիքը գրանումը չէ։ Նա հաւանած լինելով բոլոր խմբագրատներից՝ չէր մտել մինչև այսօր «Հօրիզօնի» մէջ այն պատճառով, որ «Սուրհանդակ» կայ, ուր բուն էր դրել և որտեղից ում քէֆը էր՝ հայհոյում էր. բաւական հայհոյեց նաև «Հօրիզօնին»։ Սակայն Օհանջանեանը շատ է յարգում այն սկզբունքը, որի նշանաբանն է՝ «ղեւք հակառակին ի միմեանց, ի չարիս միաբանին». և այդ չարութիւնն անելու համար միաբանվել է «Հօրիզօնի» հետ՝ «Մշակին» և նրա թղթակիցներին անուանարկելու։ Ոչինչ, առաջին փորձը աջող եղաւ և պիտի լինէր, բայց ես հաւատացած եմ, որ «Հօրիզօնն» էլ մի օր պիտի այնպէս վարվի, ինչպէս միւս թերթերը։

Կապիտալիստի, բուրժուայի, բանուորի, արհեստաւորի, ծառայողի, վաճառականի հետ գործ ունենալ և միևնոյն ժամանակ թղթակցել լրագիրներին՝ ամօթ չէ. ամօթը գառան հագուստով, դժբաղդացած, այրիացած, անօգնական կանանց ու աղջկանց օգնող ընկերութեան մէջ մտնել, պաշտօն ունենալ, ռոճիկ ստանալ և այդ դժբաղդ անզօրներին բանաբերին է՝ ամուսնանալու խոստումներ անելով, ապա հրաժարվելով ու աւելի դժբաղդացնելով թոյլ տեսին... Ամօթը որբերի, այրիների բաժինը Մարդ. Ընկ. իւրացնելն է, մանաւանդ, երբ ծնական ժողովներում արձանագրում են հրապարակով... Ամօթը ննջեցեալների հոգւոր ծախքերը կապալով վերցնել և եկեղեցու, քահանայի, տիրացուի, մոմի դրամի իւրացնելն է... և այլ այդպիսիք։

Շատ ճիշդ է ասել Զ. Ս. Միլը, որ «մի պետութեան արժէքը վերջ ի վերջոյ հասարակ է նրան կազմող անհատների արժէքին»։ Եւ «Հօրիզօնը» լաւ պտուղ է գտել. նման զնման սիրէ...

Ս. Գարագաշ

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Ցոյն-թիւրքական զինված ընդհարման հնարաւորութիւնը ուժեղանում է։ Ադրիանուպօլսում թիւրքական գլխաւոր շտաբը հրաման ունի նախայարձակ լինելու։ Ցոյն զօրքերը առաջ են շարժվում։

✦ Տրապիզօնում թիւրքական բանտում երևան է հանվել ժանտախտի հիւանդութեան 11 դէպք։

✦ Կ. Պոլսից հեռագրում են, որ «Մ. ու Առ.» կոմիտէտը վճռել է պաշտօնակ անել բոլոր այն օֆիցէրներին, որոնք համաձայն են կուսակցական տակտիկային։

✦ Պարսից պատանի շահը վերջացրել է իր զինուորական կրթութիւնը կապիտան Սմիրնովի ղեկավարութեամբ և պատրաստվում է պետական գործունէութեան, ամեն շաբաթ այցելելով մինիստրների խորհրդի նիստերին՝ պետական խնամակալի հետ։

✦ Պարսիկ դեմոկրատների օրգան «Դիւանի Դօլատը» պահանջում է արտաքսել ռուս զօրքերին Պարսկաստանից և թոյլ չը տալ Անգլիային ու Ռուսաստանին խառնվել Պարսկաստանի ներքին գործերին։

✦ «Н. Вр.»-ի ասելով Դրեզդէնում մահափորձը ուղղված է եղել Սակսոնիայի թագաւորի կեանքի դէմ։ Ձերբակալված ուսանողի ով լինելը պարզված չէ։ Դրեզդէնում և Լայպցիգում այդ մահափորձի առիթով ընդարձակ ձերբակալութիւններ են տեղի ունենում։

✦ «Н. Вр.»-ի ասելով Պետերբուրգում ֆրանսիական դեսպան նշանակված Դէլկասէն նշանակվում է ֆրանսիական զինուորական մինիստր։

✦ Ֆրանսիական մօրալ գիտութիւնների և քաղաքականութեան ճեմարանը Անդրէ Շերադամին յատկացրեց 1500 ֆրանկ մրցանակ նրա «Ֆրանսիական ճգնաժամը» գրքի համար, որի մէջ հեղինակը ընդգծում է ֆրանսիական հասարակական և պետական կեանքի հիւանդոտ երևոյթները։ Պարիզի մամուլը այդ գիրքը դատ. վիրաւորական՝ ազգային զգացմունքի համար և կշտամբում է ոչ միայն ճեմարանին, այլև գրքի հեղինակին։ «L' Homme Libre»-ն ասում է. «Մենք ուրախութեամբ կը տայինք նրան 2000, որպէսզի նա չը գրէր իր գիրքը»։

✦ Եպաշնական պրեմիէր Մատուսկիի որդին գալիս է Բագու՝ նաւթային գործը ուսումնասիրելու համար։

✦ Պարիզում Բուրցէվը ենթարկվում է դատական պատասխանատուութեան այն անձանց բողոքով, որոնց նա մամուլի միջոցով անուանել էր գաղտնի գործակալներ և պրովոկատորներ։ Շատ կարելի է, որ ֆրանսիական կառավարութիւնը արտաքսէ Բուրցէվին Ֆրանսիայի սահմաններից։


ՍՊԷՐՄԻՆ

ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻՆ միակ իսկական սպէրմինն է, որը բաղմապիսի կերպով փորձված է և՝ շնորհիւ հատած փայլուն հետանքներին՝ առաջարկվում է աշխարհիս բոլոր յայտնի գիտնականների կողմից։ Նէվրասթենիայի, սեռական թուլութեան, զառամութեան, հստէրիկայի, նէվրոզիայի, սակաւարիւնութեան, թոխսախի, սիֆիլիսի, սեղիկային բժշկութեան հետևանքների, որտի հիւանդութիւնների (չաղութեան, սրտի պնդախտութեան, սրտի բարախման, պէրէոյի, միոկարդիտի), զարկերակի կարծրացման, պլեսիոլիզմի, ողնուղարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւնների հետևանքից առաջացած յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ։ Ուշադրութիւն պիտի դարձնել անուան վրա և զգուշանալ սակաւարժէք ու անպէտք նմանութիւններից, այսպէս անուանված՝ սերմային գեղձերից պատրաստված մահլամ ներից, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։ Դրականութիւնն ուղարկվում է ձրի։ Սպէրմին-Պէլը կարող էք գտնել ամենուրեք։

ՍՊԷՐՄԱՏԻՆ-ՊԷԼԻ

ՊՐՕՖԵՍՕՐ ԴՈԿՏՕՐ ՊԷԼ և ՈՐԴԻՊ. ՍՊԲ.
ՄԱՏԱԿԱՐԱՐ ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾ. ԴՐԱՆ.

ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

(M. 111297) 12—4


## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

5 հոկտեմբերի

ՆՈՎՈՉԵՐԿԱՍԿ։ Նովոչերքասկի արուարձանում ժանտախտը տարածվում է. բոլոր հիւանդացողները վախճանվում են։ Ուղարկվում են նոր ֆելդշէրներ։

ՄՕՍԿՎԱ։ Ուժեղ քամու ժամանակ երկու զինուորականների աէրոպլանը ընկաւ և ջարդվեց։ Երկուսն էլ մահացան։

ՎԻՆՆԱ։ Օդագնաց Պէգուն շարունակում է գլխիվայր իջնելու աջող փորձերը։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Կօլօրնից եկած բանուորը մեռաւ խոլերայից։

6 հոկտեմբերի

ՔԻՇԻՆԵՎ։ Ընթանում երևան հանվեց խոլերայի նոր դէպք։

Բէլցի կայարանում պատահած հրդեհը առևտրա-արդիւնաբերական բանկին պատճառեց մի միլիոն ռուբլու վնաս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վախճանվեց օբէր-հօֆմէյստէր Իւրիյ Նէչաև-Մայցեվը։

ՍԿՕԲԵԼԵՎ։ Եկաւ զինուորական մինիստրը։

ՊՐԱԳԱ։ Տեղիս համալսարանի վարչութիւնը որոշեց այլ ևս չընդունել ռուսահպատակ ուսանողներին։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչ՝ Ա.Լ. ՔԱԼԱՆԹԱՐ


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(M. 179586/179604)

Օդոլը, ականաւոր զինանշանների միահամուռ կարծիքով, ներկայանում է իբրև առաջնակարգ պէս համապատասխանում է առամների առողջապահական պահանջներին։

Առաջնակարգ մեծ ցիրկ
ԵՂԲ.
ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ

Այսօր տեղի կունենայ խոշոր ներկայացում։ Աշխարհաբնակ վիւօսպէկտիստ Զէսաէր-Դիվի դէբիւտը։ Մասնակցում են նոյնպէս «Ռ սատանաները», ժողովրդ. ծաղրածուներ եղբ. Վինչենցօները և այլ առաջնակարգ արտիստներ։ Սկիզբը երեկ. 7½ ժամին։ «Հոլոս սատանաները» դուրս կը գան երկրորդ բաժ., որ կը սկսվի երեկ. 8¾ ժամին, իսկ Զէսաէր-Դիվի երրորդ բաժ. որ կը սկսվի երեկոյեան 10 ժամին։

ԱԶԳ.—Հինգշաբթի, հոկտեմբերի 10-ին, տեղի կունենայ օդի արքաների և սատանաների բէնէֆիսը։

854. 0—1

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆԵՐ

Քութայիսի նահանգում գտնվող մեծ տարածութեան հողի վրա մշակելու թէյ, կաղին և ծխախոտ։ Հողի մի մասը կը տրվի իբրև սեփականութիւն, իսկ մնացեալը որոշ պայմաններով, երկար ժամանակով։ Շինութիւնների համար կը տրվի ձրի փայտ։ Մանրամասնութիւնների համար դիմել՝ Тифлисъ, Вознесенская 31. Кюркчьяну.

(օ.մ.) 825. 4—4

Մամուլի տակից
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԾԱՆՐ ԵՐԱՋ
պիէսը չորս գործողութեամբ
ԼԵՒՈՆ ՔԱԼԱՆԹԱՐԻ

Վաճառվում է «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում։

ԳԻՆՆ է 50 ԿՕՊ.

(օ. մ.) 815. 10—6

„Գուտտենբերգ“ գրավաճառանոց. վաճառվում են

ՖՐԱՆԳԵԱՆ, „Գերմաներէնից հայերէն բառարան“. . . 1 ր.
ԹՈՒՄԱՆԵԱՆ, „Ռուսերէնից հայ. և հայերէնից ռուսերէն“. . 1 ր. 75 կ.
ԴԱՂԲԱՇԵԱՆ, „Русскій языкъ“ II 60 կ.
ՇԱՆԹ, „Հին Ատուածներ“, նոր տպ. 60 կ.
ԱԼԹՈՒՆԵԱՆ, „Մանգ. արշաւանք.“. 50 կ.
„ Ժողով. տնտես. ծագումը“. 75 կ.
ԼԷՕ, „Սուրբ Մեսրոպ“. . . . 75 կ.
„Ծաղկեփունջ“, երգարան. . . 50 կ.
„Արեան ձայներ“, երգարան. . 50 կ.
„Մեսրոպ Մաշտոց“ և հայ. տառեր. 10 կ.
„ԱՎԱՐՈՒԺԱՆ, „Հեթանոս երգեր». 1 ր. 50 կ.
ԴԱՂԲԱՇԵԱՆ, „Ռուս.հ. բառ“. . 8 ր.
Հայերէնից ռուս“. 6 ր.
ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ, „Եղբէրի Պ.մ.“ 1 ր. 60 կ.
„Բալկանեան պատեր.“, պատկ. 3 ր. 25 կ.
ԷԴԻԼԵԱՆ, „Դասաւանդման ձևերը“. 50 կ.
ՇԷՐԵՆՑ, „Մի գիշ. Բաղէշի բանտում“. 20 կ.
ՍՄԻՐՆՕՎ, „Դասընթաց մանկավար.“. 60 կ.
ՄԱՆԴԱԿՈՒՆԻ, „Ոսկէ բարեկամ կամ եՖբեմվերդի“. . . . 5 ր.

Դիմել՝ Тифлисъ, книж. магаз. „Гуттенбергъ“ Г. И. Галустянцу. 853. 1—1

ՄԵՂՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԸՆԹԱՑԱՆՔԻ ՏՈՒՆԸ

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՀԱՒԼԱԲԱՐ (Կախետիական հրապարակ, Լազարեվսկի փողոց № 1, Հաւլաբարի կլուբի շէնքում)։

№ 4 տրամվայը կանգնում է մի քանի քայլ հեռաւորութեան վրա։ Բոլոր արհեստագործներում, ինչպէս նախկին տարիները, ընդունվում են ամեն տեսակ պատուէրներ՝ կանաց և երեխաների զգեստներ, (փոքր 2 անգամից ոչ աւել և տրամվայի ծախսը գրկվում է կարելավարձից), սպիտակեղէնեն, հարթակարի պատուէրներ, ֆորմէնից չորս, աշակերտական և բանաբական զգեստներ, վերմակներ, ներքնակներ, վերմակի սատաններ հարթակարով և այլն և այլն։

Գուլպայագործական արհեստանոցում աշակերտուհիների և պատուէրների ընդունելութիւնը հոկտեմբերի 15 ից։

Կարօճանի արհեստանոցում ընդունվում են պատրաստելու ամեն տեսակ տուփեր՝ ծխախոտի, կոնդիտերսկի, ապտեկարսկի, շերամի, զգեստների, կոշիկների և այլն։

ԳՆԵՐԸ ՇԱՏ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ։

(Ե. Հ.) 800. 15—6

ԱՄՍԱԿԱՆ 100 ՐՈՒԲԼԻ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

կարող է ունենալ իւրաքանչիւր ազամարդ կամ կին՝ աշխատելով յարմար կերպով իր քնատնքում։ Հեռաւորութիւնը խոչընդոտ չէ լինում։ Պայմաններն ուղարկում ենք ձրի։ 1-ое Западное Т-во Вязальныхъ издѣлій. Варшава, Капуцинская 13—7. (В. 53362) 0—2

Լոյս տեսաւ և վաճառվում է Թիֆլիսի և Բագուի գրավաճառանոցներում

„ՍՈՒՍԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

Ազգային լիակատար ԵՐԳԱՐԱՆԻ ՏԱՄՆԵՐՈՐԴ տպագրութիւնը, բաղկացած 344 մեծադիր երեսներից, ընտիր թղթի վրա, լմաքուր և գեղեցիկ տպագրութեամբ։ Նոր հրատարակութեան մէջ լոյս են տեսել, բացի յայտնի գործածական երգերից, նաև նոր երգեր և բանաստեղծութիւններ՝ բաղմաթիւ կենսագրականներով և ծանօթութիւններով։ Գինն է՝ ճանապարհածախսով՝ 1 ր. 20 կ., իսկ գումարով՝ 1 բուբլի։ Օտար քաղաքներից դիմում են Բագու, «Սուսակի» հրատարակչին, հետևեալ հասցէով. Протоіерею Григорію Григоріанцъ, БАКУ. (Հ.Հ.) 846. 3—2

Վրաստանի եւ Իմերէթի Հայոց Կօնսիստորիայի

առհանում նշանակված է այս հոկտեմբերի 16-ին օրվայ ժամը 12-ին Ա.ՃՈՒՐԴ և երեք օրից յետոյ կրկնաւորը՝ Թիֆլիսի Զօրաբաշի ս. Գէորգ եկեղեցու գաւթում գտնված եկեղեցական տան միջին և ներքին յարկը վարձով տալու համար։ Ցանկացողները կարող են ծանօթանալ գրագրութեանց հետ կօնսիստորիայի գիւանատունում ամենայն օր, առաւօտեան ժամը 9-ից մինչև 2-ը։

Կօնսիստորիայի անդամ՝ Սարգիս աւ.-ք. Շիրյան
Առենադպիր՝ Մ. Վարդհաղարեան

(օ.մ.) 834. 3—3

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԱՒԹԵԱՆՆԵՐԻ

Նիկոլայեվսկայա, 36, Վօրոնցօվի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։

613. 50—47

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով և
ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՑՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ից ԲԱՑՎՈՒՄ Է կուրսերի զուգընթաց բաժանմունք երեկոյեան ժամը 7½-ից սկսած պարապմունքներով։

Ընդունելութիւնը դպրոցում առ. ժ. 8-ից մինչև ցեր. 3-ը, I Тумановская, с.д. № 13.
Ընդունելութիւնը կուրսերում երեկ. ժ. 6-ից մինչև 10-ը, Михайловскій пр., № 53.

(ա.օ.) 851. 10—2

ՆՈՐԱՇԷՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՄԹԵՐԱՆՈՑ

Ցարմար ամեն տեսակ ԱՊՐԱՆՔԻ պահեստի համար։

Գտնվում է Թիֆլիսի մաքսատան և Անդրկովկասի երկաթուղու ապրանքային մթերանոցի մօտ, 1750 ՔՈՐԱՆԱՐԴ ՍԱԺԷՆ ԾԱԻԱԼՈՎ։

Աբաստումանսկայա և Դրօվեանսկայա փողոցների անկիւնում, Դէղինֆէկցիօնի կամերայի դէմ, 1500 քառակուսի սաժէն հողով։

Ունի պահեստի ծածկոց ևս

ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱԿ, խիստ հսկողութիւն, գիշերային պահապաններ։

Տրվում է վարձու ԱՄԲՈՂՋԱՊԷՍ կամ ՄԱՍ-ՄԱՍ

Դիմել Թիֆլիս, Дворцовая, д. Сараджева, № 6. Контора Б. Ерицянъ и С. Мубаяджянъ կամ Гановская, Контора Нотаріуса Картвелова, Г. Теръ-Марукову. 842. 2—2


Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный